

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ


ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առանձնատիպ ն. Յա. Մարի անվան Լեզվի
Ինստիտուտի 1949 թ. «Աշխատությունների
ժողովածուի» հատոր IV-ից

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Ռ Գ Ա Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

1949



491.99-53.

Ղ - 18

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱՍ Է 1961 թ.

ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ
ՀԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղուց է ապացուցված, որ յուրաքանչյուր լեզու իր սեփական յուրատիպ դրսևորումներով կատարելապես ինքնուրույն լինելով հանդերձ՝ միատար չէ, այլ այդ լեզուն կրող ժողովրդի նման, իր մեջ ունի բազմաթիվ շերտեր, որոնք միմյանց վրա են բարդվել դարերի ընթացքում՝ իհարկե միշտ ավյալ լեզվի դարդացման օրինաչափություներին ենթարկվելով: Բացառություն չի կաղմում նաև հայոց լեզուն: Նա իր ընդհանուր կառուցվածքով ու բովանդակությամբ հատուկ լինելով միայն հայերին և անդրապատկերելով հայ ժողովրդի մտածողության ստադիալ դարդացումը՝ իր մեջ է առել բազմաթիվ վտակներ, որոնց ակունքները խորին հնության մեջ են թաղված: Նա հայ ժողովրդի ստեղծագործությունն է, նրա գոյացման ուղեկիցը և դարդացման ու փոփոխման է ենթարկվել հայ ժողովրդի նյութական կյանքի ու սոցիալական հարաբերությունների դարդացման համընթաց: Իսկ հայ ժողովուրդը, ինչպես ցույց են տվել նորագույն ուսումնասիրությունները, գոյացել է Հայկական բարձրավանդակում ապրած հնագույն բնիկ ցեղախմբերի և դանազան ուղիներով նրանց միացած փոքրաթիվ ցեղերի խաչավորման ու փոխադարձ ներթափանցման հիման վրա. հայերի գոյացման պրոցեսը հին Արևելքի սրտը հատվածի տնտեսական պատմական դարդացման հետևանք է եղել և վերջնականապես ավարտվել է 2-րդ դարի սկզբներում, նախքան մեր թվականությունը: Հայ ժողովուրդը ինչպես նաև նախահայկական ցեղերը շփման մեջ են եղել Սովետական Միության տերիտորիայի հարավային շրջաններում և հատկապես սովետական Ռևրասիայի տերիտորիայում մեր թվականությունից 9—3 դար առաջ ապրած ցեղերի խմբավորման հետ, սրը հին հեղինակները ընդհա-

866C11
592.4



նուր անունով կոչել են սկյութներ, որոնք իրենց անվանել են սկյութներ: Տեղային այդ խմբավորման, ինչպես նաև նրանց հետագա արշավանքների մեջ աչքի ընկնող դեր են կատարել սլավոնները: Մեր թվահանությունից առաջ 8--7-րդ դարերում Անդրկովկասը և հարևան երկրները ենթարկվել են կիմերների և սկյութների արշավանքներին: Այդ ցեղերը Ուրարտական պետության թուլացման հետևանքով, գրավել են Ուրարտուի մի շարք շրջաններ և բնակություն հաստատել այնտեղ: Նրանք Անդրկովկաս են ներթափանցել երկու ուղղությամբ և բնակություն են հաստատել ոչ միայն Շակաշենում, այլև Կարս—Լենինականի շրջանում: «Սակերի կամ սկյութացիների մի խումբը եկել էր Անդրկովկաս կիմերների հետ միասին Մեոտիս—Կոզքիսյան ճանապարհով սլթերորդ դարում մեր թվահանությունից առաջ, իսկ մյուս խումբը՝ Դերբենտի վրայով, հավանորեն յոթերորդ դարում (մ. թ. ա.)»¹

Կիմերա—սկյութական ցեղերի արշավանքը և նրանց հաստատումը Անդրկովկասում իրենց կնիքն են դնում ոչ միայն բնիկ ժողովուրդների լեզուների, այլև տեղանունների վրա. այդ տեսակետից հետաքրքրական է Գյումրի (այժմյան Լենինական) անունը, որը ճիշտ կերպով մի շարք բանասերներ կապում են կիմերական gimirai անվան հետ:² Տեղացիների մեջ պահպանված է մի ավանդություն, ըստ որի Գյումրին կառուցված է եղել հնադարյան դերեղմանի վրա, որի մեջ պահված են եղել բրոնզե նետեր, երկարաղլուխ դանդեր և այլն: Այդ տեղեկությունը հաստատվել է 1934 թվին Լենինականում կատարված պեղումների հետևանքով ստացված իրերով: Գյումրիաս-Գյումրի մեծ քաղաքը, ինչպես հաստատել է Հ. Մանանդյանը, եղել է կիմերական-սկյութական ցեղերի կենտրոնը: Իսկ կիմերա-սկյութական ցեղերը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում որոշ դեր են կատարել:

Կիմերա-սկյութական արշավանքներից հետո Անդրկովկասն են արշավում սարմատական ցեղերը՝ գլխավորապես սիրակաները, որոնց անունով էլ կոչվում է Հայաստանի զավառներ-

¹ Հ. Մանանդյան, «Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրորլեմների մասին»,— 1944 թ. էջ 13:

² Նույնտեղ, էջ 20:

րից մեկը՝ Շիրակը: Սկյութական կամ սարմատական ցեղե-
 րից են եղել նաև գոգ-երը, որոնց անունից էլ մնացել է Գու-
 գարձ տեղանունը, որի մասին ավելի մանրամասն կխոսվի քիչ
 հետո: Կիմերական, սկյութական և սարմատական ցեղերի
 առաջխաղացումը դեպի հարավ կանգ է առնում երրորդ-երկրորդ
 դարերում մեր թվականությունից առաջ, որովհետև նրանք այդ
 ժամանակ ենթարկվելով տեղական ցեղերի իշխամությանը՝ մի-
 անում են նրանց և հետզհետե խառնվում: Այսպիսով հարավա-
 յին Ռուսաստանից Անդրկովկասը եկած ցեղերի մի խոշոր մաս
 հաստատվելով Հայաստանի հյուսիսում և ավելի քան հինգ հա-
 րյուր տարի սերտ հարաբերության մեջ դառնվելով տեղական
 ցեղերի հետ ու խիստ կերպով ենթարկվելով նրանց ազդեցու-
 թյանը՝ ի վերջո խաչավորվում է այդ ցեղերի հետ՝ կազմելով
 հայ էթնոսի բաղկացուցուցիչ տարրերից մեկը: Սակայն դրան
 դուրընթաց այդ ցեղերը խորը կերպով ներդրածում են տեղա-
 կան ցեղերի վրա, վերջիններին ժառանգություն տալով իրենց
 կուլտուրայի ու լեզվի մնացորդները:

Կիմերա-սկյութական ցեղերը մեծ դեր են կատարում ու-
 րարտական պետության թուլացման և հայկական էթնոսի կազ-
 մավորման պրոցեսի արաղացման մեջ: Գիտնականները նկատի
 ունենալով հայոց լեզվի և հնադիտության մատուցած մի շարք
 փաստեր, հաստատում են, որ շատ հաճախ սկյութները resp.
 կիմերները գլխավորել են հայկական ցեղերի արշավանքներն ու
 առաջխաղացումները: Դրան իբրև ապացույց բերվում է նաև
 հայ ժողովրդի մեջ պահպանված այն ավանդությունը, ըստ որի
 հայ առաջին թագավոր Պարույրը սակերի (Սկայ-որդի) ցեղից
 է: Պարույր անունը շատ բանասերներ համարել են սկյութական
 ղեկավարներից մեկի *prodod-ի = (Προτοδυσος Հերոդոտի հորջորջ-
 մամբ) անվան տարբերակը: Հատկանշական է, որ Մ. Խորենա-
 ցին հայոց առաջին թագավոր Պարույրին և նրա որդի Հրա-
 չյային նկարագրելիս, նրանց վերագրել է արտաքին այնպիսի
 հատկանիշներ, ինչպիսիք են՝ շեկությունը, աչքերի խաժությու-
 նը և այլն, որոնք հատուկ են Ռուսաստանի հարավային շրջա-
 նի բնակիչներին: Կիմերներն ու սակերը (սկյութներ) այնքան
 ուժեղ ազդեցություն են թողել տեղական ժողովուրդների ու
 ցեղերի վրա, որ gimira (կիմեր) ցեղանունը «հերոս» նշանա-
 կությամբ պահպանվել է վրացերենում, իսկ սակ սկա ցեղանու-
 նը հայերենում՝ «սկա», տիտան» նշանակությամբ:

Կիմերա-սկյութական ցեղերի լեզուների նստվածքը սլահ-պանված է ոչ միայն Հայաստանի տեղանունների և հայերեն առանձին բառերի, այլև հայ ցեղային անունների և բարբառային ամբողջ խմբերի մեջ: Սովետական Հայաստանում վերջին տարիներին Պրոֆ. Ար. Ղարիբջանի կատարած ուսումնասիրությունները հայանաբերեցին հայերեն բարբառների մի նոր ճյուղ որի առանձնահատկությունն այն է, որ այդ ճյուղին պատկանող բարբառները իրենց ներկա և անկատար դերբայները կազմում են և վերջավորության միջոցով: ¹ Այդ ճյուղի բարբառների ձևական համեմատությունը ցույց է տալիս, որ բարբառների այդ ճյուղը իր սրտը իրողություններով մտա է Ղարաբաղի և Ադուլիսի բարբառներին, իսկ սրտը իրողություններով տարբերվում է նրանցից, որը կարող է դիտվել «այդ երկու բարբառի և մի ինչ որ երբսրդ տարբի խաչավորման արդյունք»:² Այդ երբսրդ տարբը զոկ ցեղի լեզուն է, որը ինչպես ասվեց վերևում, կապված է սակ-սկյութների և նրանց լեզվի հետ: «Շաղախի բարբառը, որը Ղարաբաղի բարբառն է, ավելի շատ նմանություններ ունի Մեղրու և Կարճևանի բարբառների հետ, սրանք էլ Ադուլիսի բարբառի (զոկերենի) հետ: Ղափանի խոսվածքը, ինչպես և Մեղրու շրջանի գյուղերի լեզուն՝ բայերի կազմությամբ նման է այս խմբին (բացի անկատար դերբայից, որ նման է Ղարաբաղին): Հեռավար «սի-երը (Սյունիք) միաձուլվել են «սակերի» հետ և կազմել մեր Սիսականքը, այսինքն՝ «սիեր և սակերը», որոնց լեզվական վկայությունը գտնում ենք Ղափանում և Արևիքում: Իրանք էլ միանալով մարդական ցեղերի հետ, կազմել են հայ բարբառների «Ս» ճյուղով խոսող ժողովուրդը: «Սիերը» և մարդերը տեղացիներ են, իսկ սակերը՝ եկվորներ, սկյութական ցեղեր, ինչպես ընդունված է կարծել»:³

Այն ենթադրությունը, ըստ որի զոկերը կապվում են սակ-սկյութական ցեղերի հետ, հաստատվում է նաև Ադուլիսի բարբառում սլահպանված լեզվական իրողություններով. Ադուլիսի բարբառի հնչյունաբանության, բառապաշարի, ձևաբանության ու շարահյուսության մեջ կան այնպիսի տարրեր, որոնք առնչը-

¹ Տես Պրոֆ. Ա. Ղարիբջանի, «Հայերենի բարբառների մի նոր ճյուղ», Երևանի Պետ. Համալսարանի գիտ. աշխատություններ, հ. 11, 1939 թ. էջ՝ 23—187:

² Նույնտեղ, էջ՝ 32:

³ Նույնտեղ, էջ՝ 32:

վում են սլավոնական լեզուների հետ, իսկ սլավոնական ցեղերը անսլավոնաճանաչորեն սրտշիչ դեր են կատարել սկյութական ցեղային խմբավորման և նրանց տեղաշարժների մեջ: Այդ տեսակետից ուշագրավ է «Ս» ճյուղի անկատար դերբայը, որը ինչպես նշել է պրոֆ. Ս. Ղարիբյանը, ներդոյական իմաստ ունի և կազմվել է հայերենի բարբառների ռւմ և շ ճյուղերի համասլատասխան իրակության նմանողությամբ:¹ Հայերենի խոնարհման մեջ անկատար դերբայի ներդոյական հոլովի իմաստը ընդհանուր է բոլոր բարբառներում, այսինքն՝ երբ ասվում է «գրում եմ» կամ «գրես եմ», նշանակում է «գրելու մեջ եմ»: Պրոֆ. Ղարիբյանը իրավացիորեն նշել է, որ «Ս» ճյուղի բարբառները առնչվում են սակ-սկյութական ցեղերի լեզուների հետ, դա նշանակում է՝ որ այդ լեզուների, ինչպես նաև հայերենի «Ս» և մյուս ճյուղի բարբառների մեջ եղած ընդհանրությունները առաջացած պետք է լինեին առնվազն դրարարի կազմավորումից մի քանի դար առաջ: Բայց այդ ընդհանուր իմաստների ձևական արտահայտությունները տարբեր ազդեցությունների ենթարկվելով՝ կարող էին տարբեր տեսք ստանալ: Այդպես է կատարվել նաև «Ս» ճյուղի բարբառների անկատար դերբայի հետ, որը ենթարկվելով դրարարի ազդեցությանը՝ կորցրել է իր սկզբնական ձևը և ստացել ա հոգնակի վերջավորությունը, որով կազմվել է դրարարի ներդոյական հոլովը:

Հայերենի բարբառների «Ս» ճյուղի խոնարհման առանձնահատկությունը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ հին հայերենի՝ դրարարի հոգնակի հայցական հոլովի Ս վերջավորությունը դործածական է եղել սակ-սկյութական ցեղային խմբավորման մեջ եղած սրտշ ցեղերի լեզուներում նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք խիստ ենթարկվել են հայացող ցեղերի ազդեցությանը և խաչավորվելով նրանց հետ՝ ժառանգություն են ավել հայերին իրենց կուլտուրայի և լեզվի շատ իրողություններ, որոնց թվում նաև «Ս» հոգնակի վերջավորությունը, որը հայ էթնիկական լեզվամտածողության համասլատասխան սրտշ բարբառներում մնացել է իբրև անկատար դերբայի, իսկ սրտշ բարբառներում իբրև հայցական հոլովի հոգնակի վերջավորություն և իբրև վերասլորուկ պահպանվել է հին հայերենում՝ դրարում: Աստվածաշնչում, ինչպես նաև հինգերորդ դարի հայ

¹ Ս. Ղարիբյան, նույն տեղը, էջ՝ 29:

պատմիչ Կորյունի աշխատութեան մեջ, ոչ առանց հիմքի, հայերն անվանված են «աղղ ասքանաղեան», այսինքն՝ ska < Aska-naz-յան ցեղ: Այդ փաստերը, ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդների մեջ պահպանված հնագույն ավանդությունների և սովորությունների դուզադիպումները խոսում են այդ ժողովուրդների հնագույն կապերի և շփման մասին: Այդ բոլորին ավելանում են նաև այդ ժողովուրդների լեզուներում պահպանված ընդհանրությունները, որոնք ամենից լավ արտահայտվել են այդ լեզուների բառապաշարների առանձին բառերի՝ իբրև հասարակական գոյով պայմանավորված երևույթների, իմաստային փոխանցումների և դուզադիպումների մեջ:

Վանա լճի շրջանում հայտնաբերված խալդեական 9—7-րդ դարերի սեպագիր արձանագրությունների մեջ կա pil բառը «քար» նշանակութեամբ: Այդ բառի որոշ տարատեսակն է խալդերեն karp հաճախ նաև kapi բառը նույն նշանակութեամբ: Այդ բառի առաջին մասը նշանակում է ամրոց, որպիսի կաղմություն, Ն. Մառի հավաստմամբ, ունի նաև ռուսերեն Кремль բառը:¹ Խալդերեն pil բառի հետ կապվում է հայերեն պեղել բառը, իսկ kar-ը բառի հետ՝ «քար» բառը, որը Հ. Աճառյանը հընդեվրոպական համարելով՝ կապում է սանսկրիտերեն karkara, հունարեն καρκαρος «կարծր», «կոշտ» բառերի հետ: Այդ kar բառը «քաղաք» նշանակութեամբ հանդիպում է կովկասյան, ինչպես նաև եվրոպական տեղանուններում. օրինակ՝ հոմացիները հիշատակում են карфаген, հույները՝ Кархедон. Միջագետքում karxa նշանակում է «քաղաք», Վրաստանում կա Ахалкалаки (Ахал-кар-аки), Հայաստանում Карс տեղանունները, որոնք քաղաք են նշանակում. շուվաշները ունեն kar-да «գոմ», «քաղաք», «ցանկապատված տեղ» և այլն նշանակութեամբ: Այդ kar այսինքն՝ kor կամ kyr իբր տարբերակով, հիշվում է խաղարական հին sar-kel քաղաքի երկրորդ եզրում. sar նույն sal-ի սպիրանտ տարատեսակն է, որի մի այլ տարբերակը կարելի է տեսնել Казань, շուվաշերեն՝ Хозан, կամ Хузан, չերեմերեն Озан, (խաղարների քաղաք) բառերի մեջ:² Այդ բառը թերևս կապվում է նաև Հիզան || խիզան բառի հետ, որը Հայաստանի մի շրջանի ինչպես նաև քաղաքի անունն է:

¹ Н. М а р р, Изб. раб. т. IV. стр. 199—229

² Համմտ. И. С. Д е р ж а в и н «Происхождение Русского народа» ст. 14—15.

Այժմյան սլավոնական ժողովուրդների և առաջին հերթին
 ռուս ժողովրդի լեզվում պահպանվել են նախապատմական շրջա-
 նի կուլտուրական շատ իրողություններ, որոնց մի մասի համ-
 արժեքները ունի նաև հայերենը: Լեզվական և կուլտուրական
 այդ հնագույն վերապրուկները կապված են սկյութական ցեղե-
 րի հետ, որոնք իրենց նստվածքն ունեն ինչպես ռուսերենում,
 նույնպես և հայոց լեզվում: «Նրբ խոսքը վերաբերում է սկյութ-
 ներին և կելտերին,—ասում է Ն. Մառը,— ապա, հասկանալի է,
 որ պետք է նկատի ունենալ հայերենի, ավելի ճիշտ հայկական
 տերիտորիայի համապատասխան դարաշրջանների բնակիչների
 խոսվածքի դրությունը: Հայերի հետ մենք առաջ ենք ընթա-
 նում և պատմականորեն դեպի սկյութական ազգաբնակչության
 շրջանը: Հայերը ռուսների հետ հավասար իրենց դրույցներում
 պահել են ճիշտակուցություններ ազգային առաջին շինարարու-
 թյան մասին. հայերը Կուսրայի շինության պատմության,
 ռուսները Կիևի կամ Կուխարայի շինության դրույցի մեջ պահ-
 պանել են լեզենդը ոչ թե սկյութների, ինչպես մենք առաջ
 ասում էինք, բայց համենայն դեպս սերտորեն կապված սկյութ-
 ների և կիմերների հետ: «Սկյութ» տերմինի հնէարանական
 անալիզը բացահայտեց, որ հայկական հողերում բնակվել են
 սկյութները. շրջաններից մեկում համատարած կերպով բնակվել
 են սկյութները իրենց հայտնի *сак* (|| *zok*) անվանակոչումով»¹

Տեղական, առանձնապես Ռուսաստանի հարավի նստվածքի
 մեջ եղած հարեթական սկյութական տարրը,— ասում է Ն. Մա-
 ռը,— մեզ համար նույնպես կարևոր նշանակություն է ստա-
 նում, եթե նա նախապատմականորեն կապվում է նաև այլ երկ-
 րամասերի հետ: Բոլորին շատ լավ հայտնի է պատմական կուլ-
 տուրայի նյութական հուշարձանների հիման վրա Կովկասը և
 Առաջավոր Ասիան Ռուսաստանի հարավին մոտեցնելու փայլուն
 փորձերը: Բայց այդ երկրների ազգագրական սերտ կապի մեջ
 նույնպես անսպասելի ոչինչ չկա: Ցեղային անվանումների ընդ-
 հանրությունը, որոնք իրենց կնիքն են դրել տեղանունների
 վրա, երբեք էլ չեն սպառվում Հայաստանի Ախուրյան գետի
 ավազանի «Շիրակ» տեղանունով և շիրակներ կամ շիրակենիներ
 ժողովրդով, որոնք գտնվել են Հարեթական Դոնի Acherde վտա-
 կի շրջանում, չէ՞ որ այդ բոլորը անժխտելի ապացույցներ են

¹ Н. М а р р, Изб. раб. т. V, стр. 53.

այն բանի, որ բասեմ-եր կամ ուս-երը մեր էրայից դեռ շատ առաջ ապրել են ինչպես Ռուսաստանի հարավում, նույնպես և Հայաստանում:¹

Մի այլ տեղ Ն. Մառը խոսելով Ուրարտու կամ Ալարոդ տերմինի մասին և դրա հետ կապելով մի շարք այլ տերմիններ, որոնց թվում նաև Ե-րաս-խ կամ Ա-րաս-խ (Արաքս) անունը, ասում է, որ այդ ծագում ունեցող դեռ էթնիկական տերմիններից ես ձեր ուշադրությունն եմ դարձնում ROS → RUS, ավելի ճիշտ հարեթական միջավայրի համար ROSH → RUSH և Վանի մի շրջանի ու ցեղի Rəsh-tuni իսկապես Ruah-tun + e տերմինների կապին: Ռուշ-Ուրարտների պատմական դերի մասին, որը լավ հիշված է ասորեստանցիների կողմից, կարելի է չխոսել, որովհետև այդ անուններով նրանք շարունակում են կոչել Հայաստանի նոր նվաճողներին՝ խալդերին,² որոնց կապը սլավոնական ցեղերի հետ նույնպես ապացուցված է:

Ուկրաինայի տերիտորիայում մեր էրայից չորս դար առաջ հանդես է գալիս ցեղային նոր խմբավորում սարմատներ ընդհանուր անունով: Նրանք աստիճանաբար շարժվում են դեպի արևմուտք՝ նեղելով սկյութներին: Նրանց ճնշման տակ սկյութական ցեղերի մի մասը շարժվում է դեպի Դանուբը և նույնիսկ անցնում է Դանուբից այն կողմը: Սարմատներից բացի Ուկրաինայի տերիտորիայում երևում են այլ ցեղեր, որոնց թվում են եղել կրորիդներ, Ֆիդամատներ, սավգորատներ, բաստարներ, ալաններ (աղվաններ) և ուրիշներ: Նրանք անկասկած ուրիշ տեղից չեն եկել և ոչ էլ նոր ժողովուրդներ են եղել, այլ հանդիսացել են դասակարգային — ցեղային նոր կազմավորումներ, որոնք առաջացել են ցեղերի խաչավորման հետևանքով, իբրև փոխադարձ շփման, ներթափանցման և մոտիկացման արդասիք: Այդ իսկ պատճառով չի կարելի ենթադրել, թե մեր էրայից առաջ սկյութները անհետ կորել են, և նրանց տեղ բռնել են ինչ-որ նոր ժողովուրդներ: Պետք է ընդունել, որ հին բնակչությունը մնացել է իր տեղում, բայց անխուսափելի վերախրմբավորման, վերադասավորման ենթարկվելու պատճառով կազմել է նոր ցեղային խմբավորումներ, որոնց մեջ էթնիկական նոր տարրերը միայն որոշ դեր կարող էին խաղալ: Համենայն

¹ H. M a p p, Изб. раб. т. V, стр. 53.

² Ն. Մ ա ա, նույն տեղ, էջ՝ 154:

քեզ սկսութեան ցեղային միութեանները շարունակել են հա-
 րատել նաև այն բանից հետո, երբ իրենց տերիտորիայում
 հանդես են գալիս ցեղային նոր խմբավորումներ, որոնք հայտնի
 են սարմատներ ընդհանուր անունով: Մեր էրայի 1--2-րդ դա-
 րերից սկսած սկսութեան և սարմատների անունները ընդհա-
 նուր, գուտ աշխարհագրական իմաստ են ստանում: Սլավոնա-
 կան այդ ցեղերը և առաջին հերթին անտերը մեր էրայի 4-րդ
 դարում ենթարկվում են դոթերի հարձակմանը: Բայց հենց այդ
 դոթերը, որոնք եվրոպացի շատ բանասերների ուսումնասիրու-
 թյան առարկան են եղել, ոչ թե Եվրոպայից եկած ցեղեր կամ
 ինչպես ասում են գերմանացիներ են եղել, այլ գերմանացիներ
 ից շատ ու շատ առաջ նրանք պատմական ասպարեզ են իջել
 և կասկած են հարեթական ստադիայի վրա գտնված ցեղերի
 հետ: Սովետական մեծ լեզվաբան Ն. Յա. Մառը ապացուցել է,
 որ դոթերի ցեղային անվանակոչումը հայտնի է դառնում այն
 ժամանակվանից, երբ նրանք երևում են Սև ծովի հյուսիսային
 ափերին: Գոթերի ցեղային անվանակոչումը կասկած է կովկա-
 սի հնագույն ժողովուրդների և հարեթական ավելի նոր ժողո-
 վուրդների, որոնց թվում նաև վրացիների հետ, որոնց ժողո-
 վրրդական, ավելի հին խոսակցական լեզվում պահպանված «աստ-
 ված» նշանակող տերմինը հարակցվում է անգլիական good
 կամ գերմանական gut բառի հետ: Յեղային այդ անվանումը
 Մառի կարծիքով իր տարբերակը ունի go-g resp. gu-g ձևով,
 որը պահպանվել է կովկասում ar հողնակի մասնիկի հետ միա-
 սին, ինչպես հայերեն գալ-գ-ար-ք բառը, որը հաստատում է նաև
 այն ենթադրութեանը, ըստ որի այդ ցեղի որոշ հատված կամ
 որոշ մաս իր բնակութեան է հաստատել Հայկական լեռնաշ-
 խարհում շատ հին ժամանակներից սկսած, հետևաբար իր լեզ-
 վի որոշ իրողութեաններ ժառանգութեան է տվել հայերին: Հե-
 տաքրքրական է նաև այն, որ գագեր ու մագոգներ ցեղերի մա-
 սին հիշատակվում է նաև մեր ժողովրդական հեքիաթներում և
 բանահյուսութեան մեջ, որը նույնպես գալիս է ճշտելու Ն. Մա-
 ռի կարծիքը՝ դոթերի ծագման և կատարած դերի մասին: Այդ
 գույքերը այսինքն՝ գուգերը կամ գագերը սերտորեն կասկած
 են քարթերի կամ քարթվելների էթնիկական խմբավորումների,
 վրացական սոցիալական ֆորմացիաների ձևավորման, վրացա-

1 Ն. Ս. Դերժավին, Նույն տեղ, էջ՝ 20:

կան ազգային հերոս Գորգի կամ Գուրգի հետ: Մառը ցույց է տվել, որ գոթերենը աղերսակցվում է կովկասյան հարեթական ստադիային դանձված լեզուների, հատկապես մեգրելերենի և ճաներենի, ինչպես նաև վրացերենի հետ: Սեծովյան գոթերի ցեղակցությունը մյուս մերձ սեծովյան ժողովուրդների, սկյութների և մյուսների հետ՝ հասցնում է մեզ սկյութ-սկոլոտների: Այդ կապակցությամբ կարելի է նշել վրացերեն kolt «հոտ», սկզբնական նշանակությամբ այս կամ այն անասունի, «ձիու», «խոզի» տեսակը և հայերեն կուլյա բառերը: Այդ նույն sku-ժա և skolot բառը շարունակում է ապրել ուսսական ЗОЛОТО և նրատարրերակները՝ գերմ. gold ← kolt, չուվաշերեն ɔltan (ultan-ից) թուրքերեն altun «հոտ», վրացերեն kolt «հոտ», հայերեն koyt «հոտ», «կուլյա», չուվաշերեն ketu «հոտ», ուսսերեն ɛKOT բառերի մեջ, որոնք ինչպես վրացերեն և հայերեն համապատասխան բառերը, նշանակում են ոչ միայն հոտ, այլև հարստություն, փող: Մերձ-սեծովյան գոթերի և հարեթական ժողովուրդների լեզուների միջև նկատված հարակցությունները մեզ տանում են այն հասարակական միջավայրը, որտեղ ձևավորվել են հարեթական նախասլավոնները. գոթերը, — ասում է Մառը, — որոնք վերածվել են սկյութների, ցեղակցությամբ սերտորեն կապված են կովկասի վաղեմի բնակիչների, նրա հնադույն և հին ու նույնիսկ միջնադարյան ժողովուրդների և աղբյուրյունների, այսպես կոչված հարեթականների հետ: Այս բոլորից պարզ կարելի է հետևեցնել, որ այսպես կոչված գոթական փոխառությունները, ինչպես նաև հնդեվրոպական արմատների զգալի մասը պետք է դիտել ոչ իբրև փոխառություններ, կամ իբրև դրսից մուծված լեզվական երևույթներ, այլ իբրև հարեթական ստադիայի վրա դանձված ժողովուրդների լեզվական իրողությունների նստվածք, որ ընդհանուր է ինչպես գոթերի, նույնպես և սլավոնական ու կովկասյան ժողովուրդների համար: Այդ բանը կարելի է ասել նաև «գոթական կուլտուրայի» և «գոթական ոճի» մասին, որոնք, ինչպես ցույց են տալիս նոր փաստերը, ինչ-որ տեղից չեն փոխադրվել արևելյան սլավոնների տերիտորիան: Ընդհակառակը, դրանք ստեղծագործությունն են տեղական այն ցեղերի, որոնք գոթերի հանդես գալուց դեռ շատ

¹ Н. Я. Марр, изб. работы т. V ст. 410:

ու շատ առաջ հայտնի են եղել և՛ Կովկասում, և՛ Կաղախստա-
նում, և՛ Սիրիոյում:

Սլավոնները մեր դարաշրջանի առաջին տարիներին ար-
դեն դրադեցնում էին հսկայական տերիտորիա կենտրոնական և
արևելյան Յվրոպայում: Բայց նրանք իրենց լեզվով, սովորու-
թյուններով և կենցաղավարությամբ միմյանց մոտ լինելով
հանդերձ՝ ներկայացնում էին անջատ և դրված ցեղեր: Պատմա-
կան տարրեր պայմանների հետևանքով այն հսկայական տերի-
տորիայի տարբեր մասերում գտնված սլավոնները տերիտորիալ
և տնտեսական տեսակետից առանձին ցեղային խմբավորումներ
են ձևացնում, որոնք կուլտուրական և քաղաքական զարգացման
տարբեր աստիճանների վրայ էին կանգնած, երբ տեղի են ունե-
նում սլավոնական ցեղերի պետական առանձին խմբավորումնե-
րը: Այդ տարբեր պայմանների մեջ ապրելու հեռանքով առա-
ջանում են սլավոնական երեք գլխավոր խմբեր՝ Արևելյան,
Արևմտյան և Հարավային սլավոնների խմբավորումներ: Հայերը
կովկասյան ժողովուրդների միջնորդությամբ շփվում էին արե-
վելյան խմբի, իսկ անմիջապես հարավային խմբի սլավոնների
հետ: Այդ պատճառով էլ նրանք ոչ միայն իրրե հարեթական
ստադիային կանգնած ցեղերի կուլտուրայի և լեզվի ժառան-
գորդներ հնազույն կապերով կապված էին միմյանց հետ, այլև
իրրե նոր ժողովուրդներ շփվում էին միմյանց հետ և բնակա-
նարար ինչպես կուլտուրական զանազան արտահայտություն-
ներ, նույնպես և լեզվական շատ իրողություններ փոխադարձա-
բար միմյանց էին ժառանգում:

Այդ տեսակետից հատկապես նշելի են տեղանունները,
որոնց մասին խոսք եղավ վերևում և արհեստի, մետաղների,
քույսերի, կուլտուրական և միջական զանազան արտահայտու-
թյունների անունները, որոնք ավելի հին կազմություն ունեն և
ուղղակի նշում են հարեթական և սլավոնական ցեղերի հնազույն
սերտ հարաբերությունները:

Բուրժուական լեզվաբաններն իսկ շեն կարողացել ժխտել,
որ հնդեւրոպացիները, երբ երևացել են Կովկասում, կուլտուրա-
կան շատ ցածր աստիճանի վրա են կանգնած եղել և բնիկ ցե-
ղերի միջոցով են ծանոթացել երկաթի, զենքերի և զրահների
գործածությանը:

Իրավացի է Մաուր, երբ մի շարք մետաղների անունները,
որոնց թվում նաև «սսկի» բառը, և նրանց հայտնագործումը կա-

պում է հարեթական ստադիային դանված հնադույն ցեղերի հետ։ Սկյութա-կովկասյան փոխհարաբերությունների մեջ սկյութների մասնակցությունը {«մետաղների հայտնաբերմանը» հայտնի է դառնում «սկյութական ոսկյա գութանի» մասին հորինված լեգենդից, սկյութական վար անելու եղանակից, որը բնականաբար կապված է մետաղի կալուտության հետ¹։ Այնուհետև Ն. Մառը նշում է, որ ուսերեն ЗОЛОТО՝ բառը, որը առաջացել է սկյութների ցեղային անուն skoloŋ բառից, առնչվում է հայերեն ոսկի, օսկի բառի հետ, որը ոչ թե ընդհանրապես ցեղային անորոշ անվանում է, այլ սկյութների ցեղային հորջորջումը, որը իբր այլ տարրերակներով կապվում է նաև կովկասյան այլ ժողովուրդների (վրացիների և այլն) աշխարհադրական որոշ անունների հետ²։ Թերևս մետաղ բառը նույնպես, որի ծագումը մինչև այժմ անհայտ է համարված, հարեթական ստադիայից մնացած բառ լինի։

Մետաղյա դործիքներից հայ և ուս լեզուներում պահպանված են շատ արժեքավոր հիշատակություններ, որոնք նրանց զանազան հատվածներին սերտ կերպով առնչակցում են սակերէ — սկյութների հետ։ Հայերենում պահպանված են սակուր, սակրաւոր, իսկ ուսերենում секира բառերը։ Որոշ բանասերներ ուսերեն секира բառը կապել են լատիներեն securis բառի հետ։ Սակայն Ն. Մառը նկատի ունենալով պատմական և հնէաբանական տվյալները, նշել է, որ sag-ar resp. sakar բառը, որն ունի երկու վերջածանց՝ ur(→ar), առաջացել է Սակ-երի ցեղային անունից։ Սակուր ձևը պահպանված է հայերենում և նշանակում է «մարտական կացին»։ Սակուրով զինվածները կոչվում էին Սակրաւորներ։ Այդ բառը գալիս է հարեթական ստադիայից և շատ տարածված է ինչպես սեմական, նույնպես և հնդեւրոպական լեզուներում, որպիսի հանդամանք վկայում է կովկասյան բնիկ ցեղերի մեջ արհեստագործության ու երկաթագործության բարձր զարգացածության մասին։ Այդպիսի լայն տարածում է ունեցել նաև երկաթ—rkina || kina տերմինը, որը միաժամանակ նաև ցեղի անուն է։ Այդ տերմինի տարրերակը askin ձևով, որ հայտնի է եղել հույների «տապար» նշանակությամբ, հարեթական ձեւավորում ունի։ Նրա տարրերակը kasin-ը որից՝ կացին բառը մինչև այժմ էլ դործածական է հայերենում։

¹ Ն. Մառ, ընտիր երկեր, հ. 5-րդ, էջ 193։
² Նույն տեղ, էջ 40։

Հնդկերոսպարան հայագիտները՝ ելնելով ձեռնարկ համեմատություններից, հայերեն շատ բառեր բերում են դրսից կամ համարում են այսպես կոչված հնդկերոսպարան նախալեզվից մնացած: Այդպիսի ձեռնարկ մտեցում է ցուցաբերված նաև հայերեն առարբաբառի նկատմամբ, երբ այդ բառը համարված է պահլավերեն: Մինչդեռ հնդարանական անալիզը ցույց է տվել, որ այդ բառը բարեն առարբի անվան ֆունկցիոնալ փոխանցումն է և երբեք էլ չի փոխառված պահլավերեն տարբարից: Այդ բառը հարեթական ստադիայի լեզուների այն ընդհանուր բառերից է, որոնք պահպանվել են ինչպես կովկասյան, նույնպես և սլավոնական և այլ ժողովուրդների լեզուներում: Այդ բառը սկզբնական շրջանում նշանակել է նաև «ձեռք», որը իր անունը տվել է իր ֆունկցիան կատարող առարկային¹:

Սլավոնական և հայկական լեզուների հնագույն հարակցությունների մասին են խոսում նաև մի շարք կենդանիների անունների պահպանումը այդ ժողովուրդների, ինչպես նաև կովկասյան այլ ժողովուրդների լեզուներում: Ն. Մառը իրավացիորեն հայերեն աֆխ, կատու բառերը կապում է ուսերեն КУСА և КОТ, КОШКА բառերի հետ: Կատու բառը շատ տարածված բառերից մեկն է, նա պահպանված է եվրոպական, ինչպես նաև ոչ հնդկերոսպարան շատ լեզուներում: Մինչև այժմ տրված չէ այդ բառի ճիշտ ստուգաբանությունը: Բայց մեզ համար տվյալ դեպքում կարևորը ոչ թե բառի ստուգաբանությունն է, այլ այդ բառի դոյության փաստն է ուսերենում և հայերենում: Այդ բառը հայերենի մեջ մտել է համեմատաբար ավելի ուշ շրջանում, այսինքն այն ժամանակ, երբ փոխանակային հարաբերությունները արդեն զգալի դեր էին խաղում ժողովուրդների կյանքում: Այդ հանդամանքը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ աֆխ և կատու բառերը կապված են ապրանքափոխանակության հետ: հայտնի է, որ հյուսիսային մորթու պահանջը շատ հին ժամանակներից սկսած զգացել են շատ ցեղեր և ժողովուրդներ. ուսական մուշտակները փոխանակվել են շատ վայրերում, որոնց թվում նաև Հայաստանում: Շատ հավանական է, որ այդ բառերը առևտրական ճանապարհով մտած լինեն հայերենի մեջ:

Հայերեն աշղահակ (աժղահակ) բառը համարվել է պարսկերեն և տրվել են նրան միայն «օձ», «վիշապ» իմաստները. Մառը

¹ Ն. Մառ, Ընտիր երկեր, հ. 2-րդ, էջ 418—419:

քննելով այդ բառը, ասում է, որ նա ոչ միայն նշանակել է «վիշապ», «օձ», կամ «ձուկ», այլ եղել է ցեղային անուն: Այդ բառի հետ է կապվում նաև հայերեն աշտե-աշտեայ բառը; որը հարեթական ստադիայի լեզուների սեմանտիկական օրենքի համապատասխան անհիմն է «օձի» հասկացության հետ: Այդպիսի կազմություն ունի նաև հայերեն Գեղարդ բառը, որի առաջին կղբը նույնպես «օձ» է նշանակում:

Հայերեն աժդահակ, իր ավելի հին ձևով աշտարակ դործածվում է նաև «սյուն», «աշտարակ», ինչպես նաև «մոմակալ» (աշտանակ) առումներով: Այդ տեղից էլ առաջացել է «երկար», «բարձր» առումը, որը հարակցվում է հնագույն պաշտամունք օձի հասկացության հետ: Այդ բառը, առանց ակ վերջավորության կազմում է yašter հիմքը, որից գոյացել է ուսերեն ящерица բառը ица փոքրացուցիչ մասնիկի ավելացումով: Այդ բառը իր մաքուր щер, ще հիմքով հարեթական լեզուներում ունի šter, šte ձևը¹: Հետևելով Ն. Մառի փաստարկումներին՝ մենք խորը թափանցում ենք մեր ժողովրդի պատմության մեջ, հասնում նրա ակունքներին՝ պարզաբանում ոչ միայն մեր ժողովրդի պաշտամունքային արտահայտությունները, այլև այն հնագույն կապերը, որ ստեղծված են եղել նրա և սլավոնական ցեղերի միջև:

Մարդկային լեզվի արմատները ոչ թե մարդու անհատական բնույթի, այլ նրա հասարակական կյանքի, հանրության նյութական կենցաղի համար բազա ստեղծելու նպատակով կատարված աշխատանքի մեջ են: Այդ պատճառով էլ ցեղային լեզուների ակունքները տեսնելու, խաչավորման ու փոխադարձ ներթափանցման երևույթները պարզելու համար մեծ նշանակություն ունեն այն առարկաներն ու միջոցները, որոնք մտածական դեր են խաղացել մարդու նյութական կյանքի ու արտադրության կազմակերպման մեջ՝ տվյալ ժամանակաշրջանում: Հայտնի է, որ մարդկային նյութական կյանքի կազմակերպման մեջ հսկայական նշանակություն են ունեցել քաշող ուժերը՝ օւղտը, ձիու և եղնիկը (եղջերուն): Կենդանիների այդ խմբի մեջ մեզ հետաքրքրող հարցի տեսակետից հատուկ արժեք ունի եղնիկը (եղջերուն), որը որպես քաշող ուժ հայտնի է եղել սլավոնական ցեղերին հնագույն ժամանակներից սկսած: Եղջերուի օգտագործումը իբրև քաշող ուժի կապված է մի շարք հանգամանք-

¹ Ն. Մառ, Ընտիր երկեր, հ. V, էջ 59:

ների և առաջին հերթին սահնակի դորձածության հետ: Ահա թէ
 ինչո՞ւ այդ կենդանու անունը ինչպես նաև նրա հետ առնչակց-
 ված САНН բառը անցել են մի շարք լեզուների և մինչև այժմ էլ
 դորձածվում են կամ իրենց հիմնական, կամ էլ ֆունկցիոնալ
 իմաստարանության օրինքով՝ փոփոխության ենթարկված, նոր
 առումներով: Հայերենում ОЛЕНЬ, ЕЛЕНЬ բառը ունի իր տարրե-
 րականները՝ եղև, որը նշանակել է «էդ եղջերու», «եղնիկի ձագ»,
 գլխավորապես դորձածական է հին հայերենում, և եղնիկ, որը
 դորձածական է նոր հայերենում: Այդ բառը կա նաև եվրոպական
 ժողովուրդների լեզուներում՝ գլխավորապես «հյուսիսային եղ-
 ջերու» իմաստով, սրը ցույց է տալիս, որ այդ լեզուներում ևս
 այդ բառը մտել է հյուսիսից, այսինքն՝ սլավոնական ժողովուրդ-
 ների լեզուներից: Վերոհիշյալ երկու բառերն էլ՝ ОЛЕНЬ, ЕЛЕНЬ և
 САНН Մառը համարում է հարեթական ստադիայի բառեր, որոնք
 նախորդել են հնդեւրոպական համարված բառերի դոյացմանը:
 Նա հայերեն անիվ բառը նույնպես կասում է САНН «սահնակ»
 բառի հետ: Այդ բոլոր փոխանցումները առնչակցված են մարդ-
 կային հասարակության կյանքում կատարված փոփոխություն-
 ների՝ հետևարար նաև իրենց դադափարախոսության ու հասկա-
 ցողությունների մեջ կատարված տեղաշարժների հետ:

Նյութական կուլտուրայի տարրեր արտահայտությունների
 հետ կապված մի շարք բառեր, ինչպիսիք են՝ հայերեն աթոռ,
 կամար, տավար, կրպակ, աղ, շոռ հարեթական ստադիայի հետ
 են կապվում և դանադան ձևերով կան նաև ուսերենում ու
 սլավոնական այլ ժողովուրդների լեզուներում: Այդ բառերի մի
 քանիսը համարված են հնդեւրոպական բառեր. օրինակ կամար
 բառը համարվել է հնդեւրոպական բառ. բայց հնէարանական վեր-
 լուծությամբ պարզվել է, որ կամար, շրջան հասկացությունը
 սկզբնական շրջանում նշվում էր կոսմիկական տերմինով. այդ-
 տեղից էլ կամար բառը, որ նշանակում է «երկնային կամար»,
 հետևարար նաև՝ «երկինք»: Հարեթական ստադիայի լեզուներից
 այդ բառը ժառանգել են և՛ հունարենը, և՛ լատիներենը և՛ եվրո-
 պական այլ լեզուներ: Այդ բառն է նաև ուսերեն կամора-ն,
 որը սխալմամբ համարվել է հունարենից կատարված հնագույն
 փոխառություն:

Տավար բառը, որ պահպանված է կովկասյան լեզուներում և
 ուսերենում, համարվել է թուրքական փոխառություն. բայց
 այդ ենթադրությունը անհեթեթություն է, սրովհետև նա ունի

նախնական տոտեմային նշանակութիւնը, որը նույն իմաստով պահպանվել է հայերենում, իսկ ուսուցիչներում և այլ լեզուներում իմաստափոխման ենթարկվելով նոր առումներ է ստացել: Բոլոր են ձգտել,—ասում է Մառը,—ТОВАР բառը թուրքերենից և mal-ը արաբերենից հանել: Այդ երկուսն էլ զուտ հարեթական ցեղային բառեր են և որպէս այդպիսին նշանակում են տոտեմաբար այս կամ այն տեսակի անասուն, որից և առաջացել է «հարստութիւն», «ուսուցիչ», «փող», որը նկատվում է հարեթական ցեղերի բնակութեան ամբողջ տարածութեան վրա: Mal-ը բուլղարներին, իսկ ТОВАР-ը շուվաշներին ցեղային բառերն են¹:

Հարեթական նստվածքը հայ և ուսուցիչներում երևում է նաև նրանից, որ մի շարք բառեր խաչավորված են ինչպէս ուսուցիչ նույնպէս կովկասյան լեզուներին հետ. այդ տեսակետից հետաքրքրութիւնից դուրի չէ «հարս» նշանակող na-sal ← → nu-sal տերմինի առկայութիւնը հայերենում և նրա կրկնակը, ru-sal ձևը, որը ուսուցիչն py-cal-ka բառի իմքն է: Այդ բառի հետ է կապակցվում նաև հայերեն նա «հարս» բառը: Սրանից հետևւում է, որ կովկասյան ժողովուրդները և սլավոնական ցեղերը հին ժամանակներից սկսած ոչ միայն շփվել, այլ խաչավորվել ու կուլտուրայէս ներգործել են միմյանց վրա:

Մարդկութիւնը, նկատել է Մառը, իր զարգացման սկզբնական շրջանում, երբ դեռևս չունէր բոլոր իմաստների համար տարբերակված և ձևավորված բառեր, անխուսափելիորեն հակառակ իմաստներ ունեցող շատ հասկացութիւններ, ինչպէս «կարճ», «երկար», «սկիզբ», «վախճան», պետք է անվաներ միևնույն բառով: Հետագայում, երբ որ մարդկութիւնը զարգացման նոր շրջան է թեկնածու, ցեղերը արդեն հնչյունային որոշ փոփոխութիւնների կամ տարբերակման են ենթարկում տվյալ հասկացութիւնները արտահայտող բառերը, կամ խաչավորվելով այլ ցեղերին հետ վերցնում են այդ հասկացութիւնները դրանվորող նոր տերմինները և միացնում իրենց բառին: Այդ է պատճառը, որ մի շարք լեզուներում կարն և երկար հասկացութիւնների համար ստեղծված են տարբեր բառեր, իսկ որոշ լեզուներում միևնույն բառը փոփոխութեան ենթարկվելով, կամ նոր շերտ ընդունելով իր վրա՝ պահել է հին, նախապատմական շրջանի իմաստը և երբեմն էլ ձևը: Այդ բանը մենք տեսնում

¹ Ն. Մառ, Ընտիր երկեր, հ. V, էջ 368:

ենք հայերեն երկար բառի մեջ, որի երկրորդ յետ հնչյունն անվան վերապրուկն է, իսկ կար եզրը՝ կարն բառն է, որի համարժեքը ուսուերեն краткий || короткий աշխինքն крат || корот բառն է, որը նույնպես խաչալորված է: Ոչ кар-т, resp. кор-т, ոչ корот-ը, ասում է Մառը, բառի հասարակ տարրերակները չեն ներկայացնում, այլ երկու բառի կրճատ միացությունն են, որոնք լրիվ ձևով երևում են հայերեն կար-ճատ-ել բառի մեջ¹: Ռուսերեն короткий և հայերեն կարն, կրճատել բառերի համարժեքները կան նաև այսպես կոչված «հնդեւրոպական» լեզուներում:

Հայերենի ու սլավոնական լեզուների աղերսակցությունը իր խորը արմատներն ունի: Բայց այդ ցեղերը հարակցության մեջ են եղել նաև իրենց զարգացման ավելի ուշ շրջանում: Հայ և սլավոնական ցեղերի փոխադարձ շփումը պատմական տարրեր ժամանակաշրջաններում և նրանց խաչալորումը տարրեր ստադիայի վրա դանվող ցեղերի հետ խորապես արտահայտվել է նաև նրանց լեզվի մեջ: Այդ է պատճառը, որ նրանց լեզուները որոշ հատկություններով հնդեւրոպականներին մերձենալով հանդերձ՝ զգալի չափով տարրերվել են նրանցից ոչ միայն իրենց ոչ-հնդեւրոպական, այլև հնդեւրոպական տարրերով: Հայ և սլավոնական լեզուների բառապաշարների մեջ եղած հնդեւրոպական բառերի թիվը, հնդեւրոպական լեզվաբանների հաշվումով, 40%-ից անց է:² Լեզվական այդ իրողությունները աշխատելով կոչված նախալեզվի հետ չկապելով և արենակցական չհամարելով հանդերձ՝ մենք չենք ժխտում, որովհետև դրանք դոյացել են պատմական այն շրջանում, երբ մետաղների օգտագործումը տնտեսության մեջ լայն չափեր է ընդունել, և ցեղերի, հետևաբար նաև լեզուների խաչալորումը տնտեսական և հասարակական հարաբերությունների համապատասխան՝ նոր շրջան է թեկնդակել: Հնդեւրոպական լեզուները, ասում է Մառը, հետևանք են ավելի բարդ

¹ Ն. Մ ա ռ , Ը ն ա ի ռ երկեր, հ. 2-րդ, էջ 156:

² Մեր աշխատության մեջ օգտագործելով հայ և սլավոնական լեզուների բառապաշարի ընդհանրությունների մասին տարրեր ժամանակներում և տարրեր առիթներով արված դիտողությունները՝ փորձում ենք Մառի լեզվի նոր ուսմունքի տեսանկյունից մոտենալ դրանց և նոր փաստերով հիմնավորել այդ լեզուների հնագույն հարակցությունները: Մենք բառերի ստուգաբանությունը կատարելիս, կամ հնդեւրոպական լեզվաբանների ստուգաբանությունները մերժելիս, առաջին հերթին նկատի ենք ունեցել բառի իմաստը, բովանդակությունը և նրա առաջացման հասարակական պայմանները:

13398
17.205



խաչավորման, որը կոչված էր արտադրութեան նոր ձևերով պայմանավորված հասարակութեան մեջ կատարված հեղաշրջումով: Արտադրութեան այդ նոր ձևը կապված էր մետաղների հայտնագործման և տնտեսութեան մեջ նրանց լայն օգտագործման հետ: Հնդերոսպական լեզուները հարեթական ստադիայի վրա դրսևանում լեզուների հետադա վիճակն են ներկայացնում. նրանք թեև հարեթական ստադիայից շատ վերապրուկներ ունեն, բայց լեզվական նոր ֆորմացիա են: Հայերենը հարեթական ստադիայի և հնդերոսպական լեզուների միջակա դարաշրջանի անցման վիճակի ներկայացուցիչն է, որը հեռացել է հարեթական ստադիայի լեզուների նախապատմական վիճակից, բայց լրիվ հնդերոսպականացման չի հասել: Անցման շրջանի այդ իրողութիւնը արտահայտվում է նրա բառապաշարի մեջ, որը հնդերոսպարանների կողմից միայն ձևական տեսակետից է քննութեան առնված: Հայերենի հնդերոսպական արմատների զգալի մասը կապված է հնագույն մտածողութեան հետ, այդ տեսակետից ուշադրով են.

Այն բանը, որը առաջ գործածվել է մեծ մասամբ եզակի, իսկ հոգնակին եղել է աչք ձևը, որը նույն ալկն¹ բառի մի այլ տարբերակն է, հավանաբար այնպիսին, որը իր վրա կրում է ոչ միայն տարբեր նստվածքներ, այլ ցեղական տարբեր խմբավորումների խոսվածքի կնիքը: Այդ բառով կազմված են բազմաթիվ ոճեր՝ ինչպես՝ յակն անկանել «երևալ», յակն արկանել «ցույց տալ», գակն արկանել «երես դարձնել», յակն առնուլ «սիրել, ակնածել, պատկանել», ալկն դնել, «աչք տնկել», «ցանկալ», յակն գալ «երևալ», ընդ ալկն խոցել «սիրտը կտրել», ընդ ալկամբ հայիլ «վատ աչքով նայել», ալկն ունել «հուսալ», «սպասել», ալկնախառութիւն (ամուսնութեան) «դավաճանութիւն», ալկն հատանել «փոս փորել, պատ ծակել», ալկնակապ «գոհարազարդ» և այլն: Նա իր ձևով ավելի մոտ է սլավոնական լեզուներում պահպանված համասլաւախան բառին, քան մի այլ լեզվի: Հին սլավոններենում այն ունի ОКО, ОЧН ձևը, ուստի ենում՝

¹ «Ալկն» բառի իմաստային փոխանցումների մասին մանրամասն խոսում է պրոֆ. Ա. Ղարիբյանը ՄՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկ. ֆիլիալի տեղեկագրի 1943 թ. № 2-ում դետեղած հոդվածում, որը կրում է «Ակադ. Ն. Մառի պայքարը ռասայականութեան դեմ լեզվաբանութեան մեջ» խորագիրը: Այդ հոդվածում նա նշում է ալկն բառի 18 իմաստային փոխանցումներ, որոնք քստ հեղինակի պայմանավորված են եղել գիտակցութեան այն մակարդակով, որն ունեցել են նախահայկական և հայկական հասարակութիւնները՝ նայելով իրենց տնտեսութեան և հասարակութեան զարգացման աստիճանին:

OKO, OCH, մինչդեռ լատիներենում՝ oculus, հունարենում՝ ὄμμα, գոթ. ahjan, գերմ. Auge, անգլ. eye և այլն: Հայերենի սրու բարբառներում պահպանված է ակն բառի օկըն տարրերակը (Աղլ. բարբառում), որն ավելի է ընդդժում հայերենում և ուսերենում պահպանված այդ բառերի աղերսակցությունը: Այդ մասին է խոսում նաև այդ բառի աչ(ֆ) ձևը, որը համարյա թե նույնանում է ուսերեն OCH բառի հետ:

Ակն բառի հետ է կապված նաև հայերեն ականջ բառը, որը առաջացել է ֆունկցիոնալ իմաստաբանության օրենքով: Ականջ բառի ջ հավելվածը առաջացել է աչֆ բառի աղդեցությամբ: Ի դեպ այդպիսի փոխանցումներ կան նաև հարեթական լեզուներում. օրինակ՝ վրացերենում նույնպես կուր «աչք» բառը ստացել է ականջ առումը՝ կուր ձևը պահպանելով անփոփոխ: Այդ բառը մենք տեսնում ենք նաև վրաց ժողովրդական կուրժճալ «արջունք» բառի մեջ, որը բառացիորեն նշանակում է «աչքի» (կուր) «ջուր» (ժճալ): Այս ընդհանրությունները մեզ հուշում են նաև մի հարցի՝ ակն և աչֆ բառի հարեթական լինելու մասին:

Բայ «խոսել», «ասել» բառը, բազմաթիվ առումներով՝ դործածվում է հայերենում՝ տարբեր միացությունների ու բառակազմությունների մեջ: Թեև ոչ բոլոր ժամանակներով ու ոչ բոլոր դեպքերում ինքնուրույնաբար: Հին հայերենում հիշվում են այդ բառի միայն ներկայի եղ. երեք դեմքերը՝ բամ, բաս, բայ, հազվադեպ են հոգնակի բամք, բան և հրամայական բա ձևերը, որոնք գլխավորապես հանդես են գալիս ասել բայի հետ միասին իրրե հարադիրներ: օրինակ՝ ասացի բամ, ասացեր բաս, ասեմ բան և այլն: Բա արմատից ունենք հայերեն բայ, բան, բաս, բարբառ, բամբասել բառերը: Որոնք զանազան իմաստներով և առումներով հանդես են գալիս հայերենում: Այդ բառը կա նաև ուսերենում баять ձևով, որը նույնպես նշանակում է, «խոսել», «ասել», «գատել»: Հատկանշական է որ баять ուսերեն բառը շատ հին ժամանակներից ի վեր դործածական է ուս ժողովրդի խոսվածքում: Հին սլավոններենում այդ բառը մտել է bajati «պատմել» ձևով. այդ բառի տարրերակն է бачня, հավանաբար նաև баян բառը, որ սխալմամբ կապված է Բայան հատուկ անվան հետ: Բայ, բան, բան, բարբառ բառերը, ինչպես ցույց է տվել սովետական մեծ լեզվաբան Ն. Մառը, շատ հին ծագում ունեն և առնչված են լեզվաստեղծության նախնական շրջանի ստադիային, երբ ձեռքը դեռևս մարդու արտադրության ու հաղորդակ-

ցության հիմնական միջոցն էր: Մարդու զարգացման ավելի
 բարձր շրջանում, երբ հանդես են գալիս արտադրության ար-
 հեստական միջոցներ և բարդանում է աշխատանքի սրտցեսը՝
 հաղորդակցման նոր միջոցի՝ հնչյուն լեզվի սահանջ է առաջա-
 նում և մարդկային կյանքում կատարված այդ խոշոր տեղա-
 շարժների համաձայն՝ մարդու լեզվի մեջ թռիչք է կատարվում,
 ու նա կինեմատիկ լեզվից անցնում է հնչյուն լեզվին, որի համար
 նա արդեն նախասպարառում էր երկար տարիների, թերևս
 դարերի ընթացքում: Այդ նոր փոփոխությունը, թեև հիմնավո-
 րապես հեղաշրջում է մարդու հասկացություններն ու աշխար-
 հայացքը, բայց վերջնականապես արմատախիլ չի կարողանում
 անել ձեռք լեզվի հետ կապված հնչյունալիտմալիքսները և այդ
 պատճառով էլ կազմվում են բազմաթիվ հասկացություններ,
 որոնք սկզբնական շրջանում «ձեռք» են նշանակել: Այդ է պատ-
 ճառը, որ բազմաթիվ լեզուներում խելք, խելոք, լեզու, միտք,
 գործել, աշխատել հասկացությունները ձեռք են նշանակել: Այդ
 բանը մենք տեսնում ենք նաև հայերեն բան, բառ, բանել, բար-
 բառ և այլ բառերի մեջ: Այդ բառը կա նաև հարեթական լեզու-
 ներում. վրացերեն $\text{ժa} - \text{a} + \text{bar} - \text{a}$ «նա նրան հանձնեց, հանձ-
 նարարեց» բառ նախադասության մեջ $\text{bar} - \text{ը}$ «ձեռք» է նշանա-
 կում, իսկ $\text{da} - \text{a} + \text{bar} - \text{a}$ «նա հանձնարարեց նրան ասել» բառ
 նախադասության մեջ $\text{bar} - \text{ը}$ «խոսք» է նշանակում, ինչպես հա-
 յերեն բան բառը¹: բան, բառ, բարբառ բառերը, սակայն, կապ-
 ված են նաև ցեղային տառնձին խմբակցությունների հետ և
 խաչավորված են կամ իրենց մեջ կրում են տարրեր ցեղերի
 լեզվական նստվածքը: Իդուր չէ, երբ Մառը բարբառ և բերբեր
 ցեղ անունը համեմատելով միմյանց հետ՝ տեսնում է նրանց
 մեջ եղած կապը: Այս փաստերը ցույց են տալիս մի կողմից՝
 հնդեվրոպարանների նկատած ընդհանրությունների սլայմանա-
 կանությունը և սահմանափակվածությունը և մյուս կողմից՝
 հաստատում են այն տեսակետը, ըստ որի սլավոնական ցեղերը
 դեռևս մեր էրայից շատ առաջ սերտ շփման մեջ են եղել կով-
 կասյան ժողովուրդների և ցեղային խմբավորումների, որոնց
 թվում նաև հայերի, հետ, որի հետևանքով լեզվական շատ իրո-
 դություններ մնացել են այդ ժողովուրդների լեզուներում՝ իբրև
 այդ սերտ հարաբերությունների կենդանի վկաներ:

Այդ մասին են խոսում նաև հետևյալ փաստերը.

¹ Ն. Մ ա ու, Ընտիր երկ. հ. V, էջ 497:

Բաւյս բառը հայերենում նշանակում է «որևէ խոտ, կանաչ» հնում նաև «ծնունդ, դարձ»։ Նա որոշ լեզուներում, ինչպես հունարենում, սլահալանված է «աճել, դարգանալ, ծնել» առումներով. սլավոնական և այլ լեզուներում այդ արմատը ունի «լինել, դոյություն ունենալ» առումը և դործածվում է սբսլես օժանդակ բայ, ինչպես հսլ. but, ուսերեն басть «լինել»։ Այս բառի իմաստի փոփոխությունները և տարբեր արտահայտությունները մեր կարծիքով դուրս են գալիս հնդեւրոպական լեզուների շրջաններից և նախապատմական ժամանակների մեջ են դրում իրենց շոշափուկները։ «Աճել, դարգանալ» և «լինել» բառերի իմաստային փոխանցումները այնքան հեշտ չի կատարվել, ինչպես կարծում են հնդեւրոպարանները։ Այդ փոխանցումը կապված է մարդու մտածողության մեջ կատարված առաջխաղացումների հետ, որոնք իրենց հերթին ժամանակից ու տարածությունից դուրս չեն։

Գանը «ծեծ» նշանակությամբ շատ հնուց դործածական է հայերենում։ Այդ բառը նշանակել է նաև «վերք», ըստ երևույթին ծեծվածք հասկացությունից առաջացած։ Այդ բառից կազմված ոճեր և դարձվածքներ, ինչպես՝ գան ըմպել, «ծեծ ուտել», գանգանակ առնել «խրավամբ հանդիմանել», «երեսին խփել», գանակոծել, գանակոծուքյուն և այլն։ Այդ բառի համարժեքը կա ուսերենում ГОИТЬ ձևով, որը մոտ է հայերեն գան արմատին, քան որևէ այլ լեզվում սլահալանված համապատասխան արմատը։

Եղևիճմայրի նման մի ծառ» կա սլավոնական լեզուներում. չեխերեն jalovec, լեհերեն՝ jalowiec, սկրախներեն՝ jalovec, ուսերեն՝ ЯЛОВЕЦ։ Սլավոնական լեզուներում այդ բառը կազմված է jalov արմատից և համապատասխան վերջածանցներից. հայերենի մեջ արմատը եղևն է և մասնիկն է-ին, որը համապատասխանում է սլավոնական ec-ед վերջավորությանը։ Այդ բառի խիստ տարածվածությունը սլավոնական լեզուներում և նրա ու հայերեն եղևնի բառի իմաստների խիստ մոտիկությունը հիմք են տալիս մեզ ենթադրելու, որ այդ բառը հայերենին է անցել սլավոնական լեզուներից՝ մեր էրայից առաջ։

Լալ բառը գտնվում է հնդեւրոպական մի շարք լեզուներում. նրա սկզբնական նշանակությունը «ծեծել», «զարնել» չի սլահալանված հայերենում։ Իր «լալ» իմաստով հայերեն բառը համապատասխանում ուսերեն п-ла+каты, п-ла-чу բառին, որը գտնվում է նաև սլավոնական մյուս ժողովուրդների լեզուներում։ Հայերեն «լալ» և ուսերեն плакаты բառերի նշանակու-

թյունը «լաց լինել», «կոծել» մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ
լա-լ բառը հայերենին է անցել սլավոնական լեզուներից աճա-
կանի կորուստով:

Լակ, լակել բառերը համարվել են հնդեւրոպական: Իրոք,
այդ արմատը կա սլավոնական մի շարք լեզուներում. ինչպես՝
հսլավ locati, loca «լիզել», սերբ. lokati, ուսերեն՝ локать «լա-
կել», լեհ. lokat «աղահորեն լափել» և այլն: Մակայն հնդեւրո-
պարանների հնչյունական ձևախոն համեմատությունները, ինչ-
պես ցույց է տվել Ն. Մառը, չեն կարողանում պարզել բառերի
գոյացման իսկական պատճառները: Նրանք չեն կարողացել հաս-
կանալ, որ շատ բառերի մեջ պետք է տեսնել սոցիալ-պաշտա-
մունքային երևույթներն ու արտահայտությունները. նրանք
քիչ են հաշվի առել այնպիսի սոցիալ-պաշտամունքային երև-
ույթների, ինչպես օրինակ ցեղերի և շան անունների ընդհա-
նուր հորջորջման իմաստը: Տոտեմիզմի մասին, իբրև այնպիսի
երևույթի մասին, որը մտնում է տնտեսական կյանքի և կեն-
ցադավարության կարգի մեջ և հիշվում է շան կասպակցու-
թյամբ, ասում է Մառը, ակնարկվում է այն կենդանիների շար-
քի հետ, որոնք հանդիսանում էին սիմվոլներ ու տոտեմներ».
հիշատակելի է, որ աստվածը ներկայացվում է շան կամ գայլի
ուղեկցությամբ: Այժմ, շարունակում է Մառը, առանձնապես
ուսանելի կարող է լինել հենվել հայերի մեջ դեռևս վերապրուկո-
րեն պահպանված շան համամարդկային պաշտամունքի վրա,
որը քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն հայ-
տարարվելու պահից, հայերի կրոնական թշնամիները օգտագործել
են քրիստոնեությունը վարկարեկելու նպատակով, իսկ հայ եկե-
ղեցական շահերի պաշտպանները լռել են այդ մասին, կամ աշ-
խատել են կորցնել նրա հետքերը: Այդ պաշտամունքը դրսե-
վորվել է Շամիրամի և Արայի առասպելի մեջ և առնչված է
արալեզների գործունեության հետ: Իսկ ար-ա-լեզ բառը կապվում
է շան հասկացության հետ. սրովհետև նրա երկրորդ լեզ եզրը
le (←leh) բառի սիրիլանա տարբերակն է ու նշանակում է
«շուն», որը պահպանված է արխազերենում la (a—la) «շուն»
ձևով, որից էլ հին վրացերեն le-ku «լակոտ», բառացի «շան»
(le) «զավակ» (ku), և ճաներեն ու հայերեն համապատասխան
բառը, որի մեջ նույնպես կռտ նշանակում է «զավակ»: La←
lay արմատի հետ է կապվում նաև ուսերեն лаять¹ հայերեն՝

¹ Ն. Մառ, ընտ. երկեր. հ. V, էջք. 236—237:

լակել, հսլավ. lokati, ուսերեն локать, սերբերեն lokati բառերը:

Լեզ արմատը գործածական է հայերենում և հայերեն բու-
լոր բարբառներում որոշ չափով հնչյունափոխությունների են-
թարկված: Այդ բառը կա նաև եվրոպական մի շարք լեզուներ-
ում, բայց այնքան ձևափոխված, որ հաճախ դժվար է նույնիսկ
որևէ հնչյունական նմանություն տեսնել նրանց մեջ: Ամենից
շատ հայերենը և՛ իր ձևով և՛ առումներով մտն է սլավոնական
բառարմատին: Այդ բառի համարժեքները հետևյալ ձևավորումն,
ունեն. լատին.՝ lingo, գոթ.՝ li-laigon, անգլոսք. liccian, գերմ.
lekon, անգլ. lick, ֆրանս. licher, իսկ հուլ. lizocti, liza, ուս.
лизать:

Դժվար է ենթադրել, թե հայերեն լիզ արմատը առաջա-
ցել է այսպես կոչված ligh արմատից, երբ սլավոնական լեզու-
ներում գործածական է lizati, лизать արմատը:

Լոյս արմատը բաղմամբով առումներով գործածվում է ինչ-
պես հին, նույնպես և նոր հայերենում: Նա իր հիմնական առու-
մից բացի նշանակում է նաև «առավոտ», «ցերեկ», «աչք», «ճրագ»
«լամպ», «աստվածություն», «պարզություն», «պայծառ», «սպի-
տակ» և այլն: Այդ բառից կաղմված են բաղմամբով ոճեր. ինչ-
պես ի լոյս ածել, հառնել, բնծայել. «հայտնի դարձնել», «երևան
հանել», աչքի լոյս, «մեկին ավետիք տալ», լոյս բնծայել «հրա-
տարակել», լոյս ընկնել «երևան դալ», լոյս ու հար անել «օգնու-
թյան հասնել», «դարձան անել», լոյս պսակ «առաջին ամուսնու-
թյուն», լոյսի կտոր շատ գեղեցիկ» և այլն: Այդ բառը զանա-
պան տարբերակներով կա եվրոպական և սլավոնական լեզուներ-
ում. ինչպես՝ հուն. leukos «փայլուն», «լուսավոր», «պայծառ»,
«սպիտակ», լատ. lux «լույս» անգլ. light «լույս», գերմ. licht
«լույս». հուլ. luci «լույս», luca «ճառագայթ», luna «լուսին»,
ուս. луч «լույս», луча «շող», лысый ճաղատ», луна «լու-
սին» և այլն: Այս բոլորը ոչ թե առաջացել են հնդեւրոպական
այսպես կոչված louko ձևից, ինչպես ճգնում են ապացուցել
հնդեւրոպարանները, այլ իրենց արմատներով ձգվում են մինչև
նախապատմական ժամանակաշրջանի խորքերը: Ակադեմիկոս
Ն. Յա. Մառը լույս, луч բառերը կապելով նախապատմական
շրջանի ցեղանունների հետ՝ ասում է, որ ուսների ցեղական
անունը հանդես է գալիս luθ տարբերակով, որը արտահայտված
է луч-ше բառի մեջ: Луч հիմքը ոչ միայն տվյալ նշանակու-

թյամբ, այլև «ЛУЧА-СВЕТА» նշանակությամբ էտրուսկական, ինչպես նաև նրանց հարազատ և զտարյուն համացեղների՝ հարեթականների տոտեմն է, որ ժառանգել են հնդեւրոպական ժողովուրդները էտրուսկներից և՛ իբրև ցեղային անուն, և՛ իբրև «լույս» նշանակող տերմին:¹ Այսպիսով, պարզվում է, որ լույս բառը գտնվել է նախաևրոպական լեզուներում և անցել է հնդեւրոպական լեզուներին իբրև հարեթական այնպիսի տերմին, որը հնդեւրոպական ժողովուրդների կազմավորման ժամանակ արդեն ուներ իր բազմաթիվ տարբերակները և արտահայտությունները, ինչպես նաև իր զանազան առումները: Մեր կարծիքով լույսի և լուսնի հետ առնչված մի շարք հասկացություններ կապված են դիցաբանական ըմբռնման հետ. արուսյակ բառը, որի բուն արմատը, ինչպես ցույց է տվել Ն. Մառը, լույսի տարբերակն է, նշանակում է «արեղակ», «լուսավոր աստղ», «արև», ինչպես նաև «սաստանա»: Այս բոլոր առումների դիցաբանական էությունը կասկածանք չի հարուցում: Բայց ոչ միայն այդ հայերենում կան լուսնոտ, լուսնահոտ բառերը, որոնք նշանակում են լուսնից, այսինքն՝ տոտեմից, մարդու սկզբնական աստծուց ստացած հիվանդություն, տոտեմից զարկված. լուսագարմ «հրեշտակ», «լուսեղենների զարմից», այսինքն՝ տոտեմից. լուսավորել, լուսավորիչ հասկացությունները նույնպես կապվում են հեթանոսական սովորությունների և արևի պաշտամունքի հետ. քրիստոնեությունը վերցնելով դրանք արմատացրել է իր կրոնի մեջ: Լուսածին «լույս ծնող», «լույս տվող», այսինքն՝ նա որ լույս է տալիս և ապրեցնում է մարդուն. քրիստոնեական վարդապետությունը հայերի մեջ մտնելուց հետո այդ բառը, ֆունկցիոնալ իմաստաբանության օրենքով փոխեց իր սկզբնական առումը և քրիստոնեական կրոնի մեջ մտավ իբրև Մարիամ աստվածածին, որը փոխարինելու եկավ տոտեմին կամ հին ըմբռնմանը և դարձավ նոր «լուսածին»: Սակայն այդ հասկացությունը, ինչպես նշեցինք, քրիստոնեությունից դեռ շատ ուշատ առաջ արդեն ձևավորված էր: Այդ բանը կարելի է ասել նաև լուսակիր բառի նկատմամբ: Այս բոլորը գալիս են հաստատելու Մառի կարծիքը՝ լույս բառի և կոսմիկական աշխարհի ու դիցաբանական ըմբռնումների հետ նրա ունեցած առնչակցության մասին:

¹ Н. Я. Марр. Изб. раб. т. III. Ст. 25.

Սիրտը հայերեն այն բառերից է, որոնք կազմում են բազմաթիվ ոճեր և առումներ. իր հիմնական առումից բացի նա նշանակում է նաև ստամոքս, զգացմունք, գուք, ոգևորություն, խրախույս, փառալերություն, փառություն, անվեհերություն, տրամադրություն, դիտավորություն և այլն: Սիրտ բառով կազմվում են բազմաթիվ ոճեր, ինչպես՝ սրտի մտք՝ «սրտանց», ի սրտե՝ «սրտանց», «ամբողջ սրտով», սիրտ անել՝ «խիզախել», սիրտ ծակել՝ «կծու խոսքերով վիրավորել», սիրտ ունենալ՝ քաջություն ունենալ, «տրամադրություն ունենալ», սիրտը դատարկել՝ «սիրտը հանգստացնել», «դարտը պատմել», սիրտը խառնել՝ «զզվանք զգալ», սիրտը կպչել՝ «զուր գալ», համվանել, սիրտը շահել՝ «մեկին իր օգտին տրամադրել», սիրտը պղտորել՝ «կասկած, երկյուղ արթնացնել», սիրտը պնդացնել՝ «վստահություն ներշնչել», «քաջալերել», սիրտը վառել՝ «ցավ պատճառել» «վիրավորել», սիրտը վկայել՝ «բնագրով գուշակել, նախագգալ», սրտին դիպչել՝ մեկին վիրավորել, մեծ սրտի տեր՝ «վեհանձն, մեծահոգի», սրտի փուշը հանել՝ «մխիթարել», սրտով գնալ՝ «մեկի ուղածի պես վարվել» և այլն: Սիրտ բառը գործածվում է հնդեւրոպական մի շարք լեզուներում, ինչպես՝ լատ. cor սեռ. cordis, անգլ. heart գերմ. Herz, հսլ. srudice ռուս. сердце, չեխ. serdce, սերբ. serce և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից հայերեն սիրտ բառը հնչյունական տեսակետից ավելի մոտ է սլավոնական լեզուներին:

Հայերենում և բալթիկ-սլավոնական լեզուներում կան մի շարք բառեր, որոնք հնդեւրոպարանները կապում են այսպես կոչված «նախալեզվի» հետ և համարում հնդեւրոպական բառեր, սակայն դրանցից և՛ ոչ մեկը չկա եվրոպական և ոչ մի լեզվում. Բայց եթե նույնիսկ այդ բառերը բոլորն էլ լինեին հնդեւրոպական բոլոր լեզուներում քիչ նշանակութային կարող էին ունենալ հարցը պարզաբանելու տեսակետից, մենք հնդեւրոպական լեզուների մեջ եղած ընդհանրությունները, ինչպես ասել ենք, դիտում ենք իբրև որոշ ստադիայի հետ կապված երևույթներ, հետևաբար իբրև անհրաժեշտ լեզվական իրողություններ, որոնց գոյությունը հայոց և ուսաց լեզուներում խոսում է նրանց միջև եղած կապի մասին: Այդ բառերն են.

Փեղձ.—ռուս. железа, որը շատ տարածված է սլավոնական լեզուներում. ինչպես՝ հսլ. žleza, սերբ. zlijezda, չեխ hliza և այլն: Այդ բառը մեր կարծիքով անցել է հայերենին սլավոնա-

կան ցեղերի այն լեզուներից, վրոնք հայերենի հետ խաչաձևոր-
վել են: Քառի սկզբի ժ և դ հնչյունների տարբերությունները
հաստատում են այդ ենթադրությունը, որովհետև դ-ի փոխան-
ցումը ժ-ի հատուկ է ուսերենին և սլավոնական մյուս լեզու-
ներին:

Գեղ, գիջանալ—հուլ. žiluku. «ջրոտ, թաց», սլավ. židek,
«հեղուկ», «ջրալի», ուսու. ЖИДКИЙ, «հեղուկ»: Այս բառը նույն-
պես մտել է հայերենի մեջ «գեղձ» բառի օրինաչափություն-
ներին համապատասխան: Այստեղ նույնպես կատարվել է ժ և
դ-ի հնչյունափոխությունը նախահայկական ցեղերի լեզուներում:

Դեռ—լիթ. dār. այս բառը չկա ուրիշ լեզուներում և եր-
բեք չի կարելի հնդեւրոպական համարել միայն նկատի ունենա-
լով հայերեն և լիթ. ձևերը:

Եզր—հուլ. jazu «ջրանցք» լիթ. eze, «եղերք», «երկու արտերի
միջև սահման», ուսու. ЯЗЬ «ձուկ բռնելու ավաղան», ուկր. jaz, jiz
«թումբ», չեխ. jez «ջրի թումբ» և այլն: Այդ բառը կա սոււմեր.
UZAR «եղերք, ափ», ասոր. ISRU «իշխանության սահման» և այլն:
Թվում է, որ այդ բայը հարեթական ստադիայի լեզուներից է
մնացել և տարածվել շատ լեզուներում:

Զ (նախդիր)—ուսու. за: Այս նախդիրը մինչև այժմ էլ
դործածվում է հայերենի մի շարք բարբառներում և վերապրու-
կորեն նաև ժամանակակից հայերենում (սքողել, սփռել, զգեստ,
զարդ, զետեղել, զարտուղի, զարմանք, զարթոնք և այլն). այն
դործածվել է հայերենում իբրև որոշիչ հոդ հայցական հոլովի
հետ, ապա տարբեր նշանակություններով՝ մյուս հոլովների հետ.
բացառականի հետ. «մասին», սեռականի հետ՝ «համար», գոր-
ծիականի հետ «շուրջ» և այլն նշանակություններով. բայի
անորոշ ձևի վրա դրվելով սաստկացրել է բայիմաստը: За նախ-
դիրը ուսերենում իր նշանակությամբ շատ մոտ է հայերեն
զ նախդիրին. այդ նախդիրը նույնպես դործածվում է հայցական
հոլովի հետ ցույց տալով՝ 1. առարկան, որին անցնում է դոր-
ծողությունը (братъ за руку, оттаскать за волосы) 2. մյուս
կողմը (за ограду, за реку) 3. ավելի (уже за полночь)
4. գործողության ուղղությունը (сестъ за рояль, за стол),
5. տարածություն, հեռավորություն (за версту отсюда),
6.) տեվողություն, ընթացք (это можно сделать за час), 7).
պատճառով, նպատակով (наказать за проступок, любить за
красоту) և այլն. դործիական հոլովի հետ նշանակում է. 1.

մյուս կողմ, ետևը (за горами), 2. անմիջապես հետո (днем за днем), 3. մոտ, շուրջը (сидеть за столом, стоять за станком), 4. տեղումթյուն, ընթացք, (за работой), 5. նստատեղ (итти за водой). 6. անձ կամ առարկա, որին ուղղված է գործողութունը (ухаживать за больным, смотреть за детьми), 7. պատճառ (за отсутствием улик) և այլն: 3. նախդիրը գործածվում է նաև բայերի հետ հետևյալ նշանակութուններով՝ 1. գործողության սկիզբը (запеть, залаять), 2. գործողության տարածումը այնչափ, որ հազիվ շոշափի առարկան, մոտավորապես, հարեվանցիորեն (запилить, зарезать) 3. գործողության տարածումը որոշ սահման (залезть на самый верх, засылать, завозить), 4. գործողությունը մինչև վերջը հասցնել, ավերորդության հասցնել (задарить, закормить), 5. գործածվում է բայի կատարյալ կերպը կազմելու համար (зафиксировать, запылиться) և այլն¹: Այդ նախդրի բաղմաղան առումները ուսերենում և դրանց համապատասխանող գործածությունները հայերենում հիմք են տալիս մեզ ենթադրելու, որ հայերեն և Չ ուսերեն չա նախդիրները սերտորեն առնչակցվում են միմյանց հետ և ձևավորվել են միևնույն օրինաչափություններով:

Թաքաւել—հսլ. topiti, ռուս. топить «ընկղմել, խեղդել», արմատն է թաւ. հայերենում հանդես է գալիս դանաղան ձևերով:

Լակել—հսլ. lokati, ռուս. локать. բառի մասին խոսել ենք մեր շարադրության սկզբում:

Լաստ-լիթ. lazda «փայտի կտոր, գավաղան, ընտանի կաղնի թուփ»: Այդ բառը կա նաև հարեթական լեզուներում, որը համարվում է փոխառություն, սակայն իր իմաստային տարբերակումները ցույց են տալիս, որ նա հարեթական ստադիայից է գալիս:

Լիկ—լիճ—հսլ. luža, ռուս. лужа, ալբան. legate, «ճահիճ»: Սլավոնական լեզուներում այդ բառը շատ լայն գործածություն ունի. կարծում ենք, որ այն սլավոնական ցեղերի լեզուներից է մտել հայերենի մեջ:

Խուց, սուց—ռուս. хинить «նախատել, հանդիմանել, կըշտամբել», хилый «թույլ, թոշնած», хулить, «հայհոյել»:

¹ Ռուսերեն օրինակները վերցված են Ուշակովի «Толковый словарь русского языка» բառարանից:

Կաժաճ հալ. gaz «ճամփա», ուսու. ИЗГАЖЕНИЕ, «աղտեղում»,
ապականում»: Հայերենը ըստ երևույթին ստացել է սլավոնա-
կան ցեղերի այդ բառն gaz ձևից:

Գոգր (գյուղ)—հալ. gali «ճյուղ», ուսու. ГОЛЬЯ. «ճյուղ»,
ուկր. hila «ստա», չեխ hul «ցուլ»:

Կուրծ, կրծել—հալ. друза, grysti «կրծել, խածնել», ուսու-
սերեն ҮРЫЗТЬ «կրծել»:

Հալել ուսու. полая.

Հարթնուլ—հալ. predati «ցատկել, դողալ», ուսու. прынуть
«ցատկել»:

Հեղուլ, հեղեղ, գեղուլ—ուսու. ПОЛО-ВОДЬЕ «գետի հորդում»,
ВОДОПОЛЬЕ «ջրի հորդում», գետի գարնանային հորդում»: Ռու-
սերենում ПОЛЬ բառը առանձին չի պահպանված: Նա հանդես է
գալիս բարդությունների մեջ: Հավանաբար սլավոնական այն
ցեղերի լեզուներում է կենդանի եղել, որոնք ուսուերենի կազ-
մավորման մեջ մեծ դեր չեն խաղացել:

Ալաճալ—ուսու. СЛАТЬ. СЫЛАТЬ «ուղարկել»: Բառի արմատն
է սուլ, որը պահպանված է սլավոնական լեզուներում. ինչպես
հալ. sülū «գեսպան», սերբ. slati. siljati «ուղարկել»: Հայերեն
սլաճ բառը նույնպես կապվում է այդ արմատի հետ: Բայց այդ
բառի տարբերակներն են նաև հայերեն տսեղն, ուսուերեն ОСТРЫЙ
բառերը:

Այս բառերից բացի հայ է սլավոնական լեզուների ու
հնդեվրոպական մի շարք այլ լեզուների մեջ նկատված են հե-
տևյալ ընդհանուր բառերը. ագանել, աղաղել (աղ-աղ-ել, չեխ az)
ալիք, ականջ, ակն, աղ (СОЛЬ նաև СОЛНЦЕ), աղկաղկ (ուսու.
АЛКАТЬ «տենչալ, քաղցել», հայերեն նաև՝ աղքատ), աղուէս,
ածել, ամբողջ, ամիս, ամպ, այգի, այտ, այլ, այրել, այց,
անկիւն, անձուկ, անուշ, աչք, առ (նախդիր), առագաստ, առաս-
տաղ, առիւծ, առողանել, առու, ատաղձ, ատեան, արալեղ, արբ,
արբանեակ, արմուկն, արօր, աքաղաղ, բալ «ասել», բալ «մշուշ»,
բահ, բարհ, բեկանել, բերել, բերան, բիր, բոլոր, բոկ, գեղձ,
գեղմն, գետ, գերի, գերծել, դէջ, գէտ (գիտեմ), գիլ (գլոր), գի-
շեր, գիր, դա, դալ (դայլ), դարբին, դեղեկել, դէզ, դի (ակ), դիել,
դու, դուռն, դուստր, դուրդն, եղանիլ, եղբայր, եղնիկ (елень,
олень), եմ, ես, երգիծանել, երդումն, երեսուն, երերալ, երեք,
երի, երկայն, երկան, երկու, եօթն, ընդերք, ընթեռնուլ, թա-
թաւիլ, թակել, թան (թօն), թարախ, թաւ, թէկն, թեր, թե-

քել, թոպել, թուֆ, թուք, իք (ինչ), ինն, իննսուս, իսկ, իւր,
 լալ, լանջ, լափել, լեարդ, լեզու, լեսուլ, լիզել, լլուկ, լողալ, լոյս,
 լոյց, լու, լուանալ, լուծ, լուռ, լուսան, լսել, լսածանել, լսարել
 (լսարշել), խոյլ, խուս (ХИНИТЬ), ծամել, ծան (ճանաչել), ծեր,
 ծին, կածան, կազին, կարթ, կարծր, կարկուտ, կեալ, կեղ, կեր
 (կուր), կին, կիւ, կոյ (կու), կով, կորկոտ, կուլ (կլանել ГЛАТАТЬ),
 կումք, կոնչել, (КРИЧИТЬ), կռուել, հաջել, հասնել, հար (հարկա-
 նել), հարց, հացի, հաւ (պապ), հեծանել, հետք, հերիւն, հեալ,
 հենք, հինգ, հիւթ, հողի, հուանի, հուովել, հող, հոյսկապ, հով,
 հովիւ, հուն, հուր, հորան, ձաղել, ձմեռն, մաշել, մածնուլ, մաղ-
 թել, մամուլ (МОЛОТЬ), մայր (մառ), մայր (МАТЕР), մանր, մա-
 տաղ (МОЛОДЬ), մաքի, կեղծ, մեղկ, մեռանել, մերկ, մեք, մէզ,
 մէզ, մէջ, մի, միս, մլաղաց, մլուկ, մուլ, մուխ, մուկն, մուս,
 մուրճ, մրջիւն, յաղենալ, յղի, յղով, յօղ, նա, ողնի, ոլոգ, ողո-
 դել, ոչ, ոռնալ, ոսկոր, ոստին (չոր), օան, օրդի, օրծկալ, օրձ,
 օւթ, օւթսուս, օւղի, օւնկն, օւսանել, օւտել, օւր, օւրանալ, օւ-
 բուր, չորք, պալար, պապանձել, պոյսկել, պուտ, ջերմ, ջիւլ, ջին,
 ջով (ծիւ—ОВИН), սա, սառ, սառն, սէգ (СИГАТЬ), սէր (СЕМЬЯ),
 սիրտ, սկեսուր, ստանալ, ստեղծել, ստեղն (СТОЛЬБ), ստերջ,
 ստէպ, ստոյգ, վեց, տայգր, տալ (ДАТЬ), տասն, տարդալ, տար-
 տամ, տեղ, տեռ (կաշի, քող), տեւել, տիւ, տոկալ, տուն, տոփել,
 տրամ, տրուս, տրտում, տրտունջ, ցախ, ցայտել, ցելուլ, ցոյց,
 փեղկ, փուչ, քակոր, քար, քենի, քերել (քորել), քերթել, քէն,
 քոյր, քուն, քուք (ողբ), օձ (УЖ), օղ և այլն: Այստեղ հիշա-
 տակված բառերի և սլավոնական լեզուների համապատասխան
 տերմինների սրտ մասի նույնությունը մենք կասկածանքի տակ
 առնելով հանդերձ՝ գտնում ենք, որ այնուամենայնիվ դրանց
 զգալի մասը ընդհանուր է այդ լեզուների համար: Այս փաստե-
 րով նույնպէս հաստատվում է, որ հետավոր անցյալում նախա-
 հայկական և նախառուսական սրտ ցեղեր շփվել են միմյանց
 հետ, փոխադարձ խաչավորվել, հետևաբար նաև իրենց լեզուներ-
 ից շատ իրողություններ ժառանգել հայ և սլավոնական ժողո-
 վուրդներին: Այդպիսի իրողություններից կարելի է համարել
 նաև այն բառերն ու լեզվական իրողությունները, որոնք հնդեվ-
 բոպական չլինելով՝ դուրս են մնացել 19-րդ դարի լեզվաբանու-
 թյան տեսադաշտից: Այդպիսի շատ բառեր և լեզվական իրողու-
 թյուններ նկատել է Ն. Մառը. դրանցից մի քանիսի մասին
 մենք խոսեցինք մեր շարադրության մեջ: Սակայն նոր ուսում-

նասիրութիւնները կարող են հայտնարեւել շատ ավելի մեծ նո-
 րութիւններ, որոնք նոր լույս կարող են սփռել ինչպես հայոց
 լեզվի, նույնպես և հայ ժողովրդի կազմավորման պատմութեան
 վրա: Այսպես օրինակ հայերեն նզովել բառը հանված է պահլա-
 վերեն nizav ձևից, որը, ինչպես խոստովանում է Աճառյանը,
 պահված չէ:¹ Մենք կարծում ենք, որ այդ բառը կապվում է
 մայր իշխանութեան ժամանակաշրջանի հետ, որովհետև բառը
 կազմված է ni/ner և zov բառերից, որոնցից ni/ner, ինչպես
 նշել է Ն. Մառը,² «կին», «մայր» է նշանակում, իսկ zov բառը
 մենք կապում ենք sue/(so-we) resp. sve «բախտ» բառի հետ,
 որը հնէարանորեն նշանակում է նաև «երկինք»: Նզով բառի մեջ
 ն (նի→նէր) նշանակում է «վերև», որը բառիմաստի հետագա ձե-
 վափոխումն է: Այդ բառի նման նշանակութիւնը մենք տեսնում
 ենք նաև ներքին բառի մեջ, որը հնէարանորեն նշանակում
 է նաև «վերին»: Այդ բառի մի այլ տարբերակը՝ ner-qini
 «ներքինի» նույնպես իր իմաստով առնչվում է մայր իշխանու-
 թեան շրջանի հետ և նշանակում է «կին», որը իր ավելի վաղ
 ստադիայի բովանդակութեամբ, Մառի խոսքերով ասած, պար-
 դարանվում է իբրև земля—мать.³ Ne-nu բառի հետ են կապ-
 վում հայերեն նա, վրացերեն pena «մայր», մեդր. na-na «մայր»,
 ni-sa «հարս», ճաներեն nu-sa «հարս» և այլն տերմիններ: Նզով
 բառը հայերենում ունի «բանադրանք», «անեծք» իմաստը, որը
 ավելի ուշ շրջանի դոյացութիւն է. այդ բառը որպես մայր
 իշխանութեան շրջանի հետ կապված տերմին նշանակել է «կան-
 չել», «անվանել» (մոր կողմից), ապա՝ «վերից ցած մեկին կո-
 չել» և ի վերջո՝ «նզովել», «բանադրել»: Այդ բառի «կանչել»
 իմաստը պահել են սլավոնական մի շարք լեզուներ. ռուս. зову,
 звать, բուլղար. зова, սերբ. зовем, սլով. зов «կոչ», «կոչել»:
 Հետաքրքիր է այն հանգամանքը, որ լիթ. zaveti ունի «կա-
 խարդել» իմաստը, որը ավելի է հաստատում մեր ենթադրու-
 թիւնը: Մենք կարծում ենք, որ ռուս. забет «կտակ», «խոս-
 տում», «երդում», ЗАВЕТНЫЙ «նվիրական», «սուրբ», «բաղձալի»
 բառերը նույնպես կապվում են այդ բառի հետ: Այս բուլոցից
 հետևում է, որ ճիշտ չեն հնդեվրոպարան հայադեաները, երբ այդ
 բառը համարում են պահլավերեն բառ: Նրանք, ինչպես հնդեվ-
 րոպական լեզվաբաններն ընդհանրապես, լեզվական իրողու-

¹ Հմմտ. չ. Աճառյան, «Արմատական բառարան», հ. 5-րդ, էջ 109:

² Н. М а р р. Изб. раб. т. V. ст. 491.

³ Նույնը, էջ 491:

թյուններն ուսումնասիրում են նկատի ունենալով լեզվի արդեն հարարերականորեն ամբողջացած ձևաբանական և հնչյունաբանական կողմը, որով անհնարին է պարզել լեզուների, լեզվական իրողությունների դարգացման ու փոփոխման օրինաչափությունները: Բառի ձևաբանական և հնչյունաբանական վերլուծության մեթոդով չի կարելի որևէ իրական եզրակացության հանգել, եթե այդ վերլուծությունը չի կապակցվում բառի բովանդակության և նրա առաջացման պատճառների՝ հասարակության գոյով սլայմանավորված իդեոլոգիայի հետ: Իսկ այդ կարելի է կատարել միայն հնէաբանական մեթոդով, որը ժխտում է հնդեվրոպարանությունը ու նրա բոլոր մեթոդները:

Այսպիսով, վերևում մեր նշած բառերի զգալի մասը ավելի հին ձևավորում ունի և կապվում է հարեթական ստադիայի վրա դանված ժողովուրդների լեզուների հետ: Այդ պատճառով էլ մենք դիտում ենք այդ բառերը ոչ իբրև հասարակական տնտեսական պայմաններից անկախ երևույթներ, այլ իբրև հասարակականորեն պայմանավորված կատեգորիաներ, որոնց յուրաքանչյուր հնչյունական փոփոխումն անգամ սոցիալականորեն պատճառարանված է և ունի իր տնտեսական-հասարակական պատճառները: Հնդեվրոպարանները համեմատելով լեզուները միմյանց հետ և նկատելով նրանցում որոշ ընդհանրություններ, ոչ թե դրանք համարում են անհրաժեշտաբար առաջացած, այլ դիտում են իբրև առանձին, սոցիալ-տնտեսական պայմաններից անկախ երևույթներ, որոնք իբր թե զարգանում են հասարակության պատմությունից դուրս և կապ չունեն հասարակական ֆորմացիաների փոփոխման ու դասակարգային պայքարի հետ: Այդ հակապատմական սկզբունքի վրա կառուցելով իրենց տեսությունը՝ նրանք սահմանում են հնչյունական կայուն օրենքներ, որոնք իբրև թե մի լեզվից մյուսին են անցնում, առանց որակական լուրջ փոփոխությունների ենթարկվելու:

Մառը ջախջախիչ հարված տալով հնդեվրոպարանությանը և ստեղծելով մարքս-լենինյան մեթոդոլոգիայի վրա հիմնված լեզվի նոր ուսմունքը, ցույց տվեց, որ լեզուների զարգացումը և դրանց մեջ կատարված փոփոխությունները սերտորեն առնչակցված են հասարակության կյանքում կատարված փոփոխությունների ու տեղաշարժների հետ, որ աշխարհի բոլոր լեզուները իրենց պատմությամբ այս կամ այն ձևով առնչված են միմյանց հետ, և իրենց զարգացմամբ իբրև իդեոլոգիական վեր-

նաշենք, վերջին հաշվով պայմանավորված են սոցիալ-տնտեսական բաղիսի մեջ կատարված փոփոխութիւններով: Բայց այդ բոլորով հանդերձ յուրաքանչյուր լեզու ունի այնպիսի առանձնահատկութիւններ, որոնք առաջացել են տվյալ ժողովրդի կյանքի կոնկրետ-պատմական պայմանների շնորհիւ: Լեզվի նոր ուսմունքը հաստատում է, որ լեզվական փոփոխութիւնները տեղի են ունենում հակադրութիւնների պայքարի պրոցեսում, որ լեզվի մեջ միշտ կան առաջատար և հետադեմ, մահացող երևույթներ, որոնց բախման ընթացքում միշտ հաղթում է առողջը, նորը, ժամանակի պահանջներն ու առաջավոր իդեոլոգիան արտացոլողը: Լեզուների զարգացման նկատմամբ ցուցաբերած ճիշտ մոտեցման շնորհիւ՝ Մառին հաջողվեց բացահայտել ինչպես շատ լեզուների, նույնպես և հայերենի զարգացման ընթացքը և ցույց տալ դանազան շրջանների ու դասակարգերի իդեոլոգիայով պայմանավորված լեզվական փոփոխութիւնները: Նա խիստ քննադատութեան ենթարկելով հնդեվրոպական լեզվաբանների տեսակետները հայերենի և նրա բառապաշարի մասին, անժխտելի փաստարկումներով հաստատեց, որ հայերեն բազմաթիւ բառեր, որոնք հնդեվրոպաբանները հանել են այսպես կոչված «նախալեզվից», նախահնդեվրոպական ստադիայի լեզուների հետ են առնչված և հարեթական լեզուների միջոցով անցել են ինչպես հայերենին, նույնպես և հնդեվրոպական լեզուներին: Այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ալիք, աղանջ, աղն, աղ, ամ, ամիս, ամուսին, այգի, այլ, այր, այրել, անուն, առ (նախադիր), առնել (առնել), արբ, արբանեակ, արծաթ, արմուկն, աքաղաղ, բահ, բան, բառ, բարբառ, բարի, բերան, գալ, գայլ, գառն, գարի, գարշ, գիշեր, գիր, ել (ելանել), եղբայր, եղնիկ, եզն, եռալ, երգ, երես, երեկո, երեսուն, երևիլ, երկայն, երկան, երկնչել, երկու, էլ, թառամել, թուր, թովել, թամբ, թումբ, թուք, լակոտ, լաւ, լափել, լեզու, լոյս, լսել, լուսին, ծանոթ, ծնանել, կաթն, կալ, կաղին, կայծ, կարգալ, կին, կողի, կոկորդ, կող, կով, հալել, հայր, հար, հաւ, հեծանել, հին, հնոց, հոլով, ձեռն, ձե, ձի, ձիւն, ձմեռն, ձող, մայր, մայրի, մարդ, մըջիւն, յոլով, նու, շուն, որջ, ոսկր, որդի, որովայն, որս, ջուր, սառոյց, սար, սարդ, սեր. տասն, քառ, տիւ, տօն, տուն, քար, քիմք, քոյր, օթ, օձ, ուղի, ուրուր և այլ բառեր, որոնց մի մասի բացատրութիւնը փորձեցինք տայ՝ լեզվի նոր ուսմունքի տվյալներից ելնելով, իրենց իմաստով, շատ դեպքերում նաև իրենց ձևով ու շատ առումներով

արտահայտելով նախնական մտածողութիւնը՝ հաստատում են
Ն. Մառի այն կարծիքը, ըստ որի հայերենը գտնվում է հարե-
թական ստադիայից հնդեվրոպականին անցնելու ամտիճանին:

Լեզվական այս փաստերը, ինչպես նաև ռուս և հայ ժողո-
վուրդների մի շարք սովորույթների, պաշտամունքային ու երա-
ժրշտական արտահայտութիւնների, հնագույն դենքերի ու առար-
կաների միջև նկատված ընդհանրութիւնները հիմք են տալիս
մեզ հաստատապես ասելու, որ հայ և ռուս ժողովրդի կազմավոր-
ման մեջ դեր կատարած հնագույն ցեղերի մեջ եղել է տնտե-
սական և կուլտուրական սերտ կապ հնագույն ժամանակներից
սկսած: Այդ կապը իր կնիքն է դրել ինչպես այդ ժողովուրդների
լեզուների, նույնպես և սովորույթների, կրոնական պաշտա-
մունքների, դենքերի, արվեստների ու կուլտուրական այլ արտա-
հայտութիւնների վրա: Վերոհիշյալ փաստերը հաստատում են
Մառի կարծիքը՝ Կովկասյան ժողովուրդների և ռուսների աղեր-
սակցութեան, ռուսերենում եղած հարեթական նստվածքի առ-
կայութեան մասին: Մառը ճիշտ կերպով նշում է, որ խոսքը ոչ
թե ռուսերեն печатъ, книга, слон և այլ կուլտուրական բա-
ռերի փոխառութեան, այլ զանազան բնագավառներ ընդգրկող
բառախմբերի, ինչպես օրինակ՝ բուսական աշխարհի, կենդանի-
ների, հողագործական կուլտուրայի և այլ անունների մասին է,
որոնցից յուրաքանչյուրի տեղը որոշվում է հարեթական լեզու-
ների մեջ՝ հնէարանական անալիզի միջոցով: Այդ նշանակում է,
որ ինչպես ռուսերենը, նույնպես և հայերենը հանդիսանում են
հետագա զարգացումը պրոմեթեիտներին նախորդած լեզուների,
հարեթական ստադիայի վրա գտնված լեզուների, որոնք տնտե-
սութեան և հասարակութեան զարգացման աստիճանին համա-
պատասխան ներկայացնում են լեզվական տարրեր սխառեմներ:

Այսպիսով Հայկական Բարձրավանդակում և Ռուսաստանի
հարավային շրջաններում ապրած ցեղերի մեջ հնագույն ժամա-
նակներից սկսած ստեղծվել են տնտեսական և կուլտուրական
կապեր, որոնք իբրև հարեթական ստադիայի վերապրուկային
երևույթներ արտացոլվել են հայ և ռուս ժողովուրդների լեզուների
մեջ: Հայ և ռուս ժողովուրդների լեզուների բառապաշարի քննու-
թիւնից պարզվում է նաև, նույնպես և հնդեվրոպական ստա-
դիայի լեզուների իրողութիւններ, որոնք այդ ժողովուրդների
նյութական կյանքի պայմանների փոփոխման համաձայն փո-
փոխութեան են ենթարկվել՝ ստանալով լեզվական յուրատիպ

ձևավորումներ: Այդ լեզուների հնդեվրոպական շերտի մեջ մնացած հարեթական ստադիայի վերապրուկային տարրերը, ինչպես նշել է Ն. Օ. Մարր, հարեթական ստադիայի լեզուների հնդեվրոպականի վերափոխման ընդհանուր պրոցեսի մեջ չեն ընդգրկվել և իրրև լեզվական քարացած երևույթներ մինչև այժմ էլ հարատևում են այդ լեզուներում:

С. Казарян

Древнейшие армяно-русские языковые связи

Резюме

В языке теперешних славян, и в первую очередь в языке русского народа, сохранилось не мало культурных фактов доисторического периода, параллели которых мы находим и в армянском языке. Эти древние языковые и культурные пережитки связаны прежде всего со скифскими племенами. „Когда речь идет о скифах и кельтах, говорит Н. Я. Марр, то понятно, надо иметь ввиду состояние речи армян, вернее, насельников армянской территории соответственных эпох. С армянами мы продвигаемся и исторически к району скифского населения. Армяне наравне с русскими сохранили в своих сказаниях о первом национальном строительстве, армяне—в сказании о построении Куара, русские—в сказании о построении Киева или Куйаба, легенду не скифов, как раньше мы говорили, но все-таки тесно связанных со скифами кимеров. Полеонтологический же анализ термина „скиф“ вскрыл, что армянские земли населялись скифами, один из районов сплошь был населен скифами под известным их именем „сак“ (zok)¹.

Еще в начале нашей эры, славяне уже занимали огромные территории в центральной и восточной Европе. Армяне, через посредство кавказских народов общались с восточной группой славян, и непосредственно с южной славянской группой. По этой причине они были связаны со славянами не только как наследники культуры и языка племен, стоящих на яфетической стадии развития, но и

¹ Н. Марр—Избранные работы, том V, стр. 195.

как новые народы. В этом отношении, особенно заслуживают внимания топонимика, названия ремесл, металлов, растений и другие культурно-мифические отображения, которые имеют более древнее происхождение и подчеркивают тесную связь яфетических и славянских племен. Прав Марр, когда он названия ряда металлов, ... в том числе и слово „золото“ и его открытие связывает с племенами, стоявшими на яфетической стадии. „В скифо-кавказских взаимоотношениях причастность скифов к „изобретению металла“ не только золота, но и железа, явствует ведь и из легенды о скифском золотом плуге, о скифском пахарстве, связанном, разумеется, с металлической культурой“.²

В армянском и русском языках сохранились некоторые названия металлических орудий, тесно связанные со скифами и саками. В армянском языке сохранились слова *Միւրի*, *միւրիոր*, а в русском „секира“. По данным филологического анализа эти слова с двумя суффиксами *ир* (*er*), произошли от племенного имени саков. Форма *Միւրի* сохранилась в армянском языке и означает „боевая секира“, а вооруженные секирой называются *միւրիորիւր* — „секироносцы“. Это слово берет свое начало в яфетической стадии и очень распространено, как в семитических, так и в индоевропейских языках, что свидетельствует о высоком уровне развития ремесла и обработки железа у туземных племен. Такое широкое применение имел также термин *gkīna* || *kīna*, который одновременно служил и названием племени. Разновидность этого термина в форме *askin*, которая была известна грекам в значении „топор“, имеет яфетическое оформление, другая разновидность его *kasin*, от которого армянское *կայրի* до сих пор употребляется в армянском языке. О взаимосвязях армянского и русского языков свидетельствуют некоторые названия животных, сохранившиеся в языках этих народов, и у других кавказских племен. Марр вполне прав, связывая армянское название *կատու*, *աքի*

² Марр, избранные работы том V, стр. 193.

‘киса’ и ‘кошка’ с русскими названиями “киса-кот”, “кошка”. Слово кошка—одно из распространенных слов и оно сохранилось как в яфетических, так и в индоевропейских языках.

Известно, что в формировании человеческого быта большое значение имела тягловая сила: верблюд, лошадь и олень (елень). В этой группе животных, со стороны интересующего нас вопроса, большую ценность представляет олень-елень, который как тягловая сила был известен славянским народам с древнейших времен. Использование оленя как тягловой силы связано с рядом обстоятельств и в первую очередь с употреблением саней. Слово “олень”, „елень“ в армянском языке имеет две разновидности: слово *Էղն*, которое означает ‘самку оленя’ и ‘детеныша’ употреблялось и в древнем армянском языке, и слово „*Էղնիկ*“, которое употребляется и в современном армянском. Слово это бытует также и в языках европейских народов, главным образом, в смысле „северного оленя“ и показывает, что оно проникло в эти языки с севера, т. е. перешло из славянских языков. Вышеупомянутые три слова: *олень*, *елень* и *сани*, Марр считает словами яфетической стадии; армянское слово „*շնիկ*“ (калесо) он также связывает со словом сани — „*սնշնիկ*“.

Взаимообщение армянских и русских племен в разные исторические эпохи и их скрещивание с племенами, находившимися на различных стадиях развития, нашли свое глубокое отображение в их языках. Вот почему эти языки, помимо своих общностей с индоевропейскими языками, имеют и сильно отличительные черты. В лексике армянского и славянских языков число так называемых „индоевропейских терминов“, по счислению индоевропейцев, превышает количество четырехсот.¹

¹ Используя в нашей работе замечания различных авторов об общностях лексики армянского и славянских языков мы стараемся подойти к ним с точки зрения марровского нового учения и новыми фактами обосновать взаимоотношения этих языков. Давая этимологию какого-либо слова или отрицая мнения индоевропейских лингвистов, в первую очередь мы принимаем во внимание значение слова, его содержание и общественную обусловленность.

Не связывая эти языковые факты с так называемым „праязыком“ и не считая их кровными, тем не менее мы не отрицаем их, ибо они образовались в ту историческую эпоху, когда употребление металлов в хозяйстве имело широкое распространение, и скрещивание племен, а следовательно и языков вступило в соответствующую общественно-экономическую фазу. Индоевропейские языки, говорит Марр, являются результатом более сложного скрещивания, которое было вызвано новым переворотом в обществе, обусловленным новыми способами производства.

Эти новые способы производства были связаны с открытием металлов и их широким употреблением в хозяйстве. Индоевропейские языки представляют последующую степень языков, стоящих на яфетической стадии, и хотя они носят много пережитков яфетической стадии, но составляют новую формацию. Армянский язык является представителем промежуточной эпохи языков яфетической стадии и индоевропейской, он отошел от доисторического состояния яфетической стадии, но не дошел до полной индоевропеизации. Такие факты переходного периода находят свое отражение в лексике языка которая изучается индоевропейцами лишь формально. Значительная часть индоевропейских корней в армянском языке связана с первобытным мышлением; в этом отношении заслуживают внимания слова: *աղբ* (око, очи), *բալ* (баять); *դաշն* (ганить), *հղկել* (ел), *լալել* (лакать, лай), *լիզել* (лизать), *լուս* (луч, луна), *սիրտ* (сердце), *խոն* (хинить), *ստանալ* (ссылать, слать), *հրծել* (грызть), *կոչել* (кричать), *սեգ* (сигать), *տալ* (дать) и т. д.

Эти и множество других фактов подтверждают, что в далеком прошлом определенные доармянские и дорусские племена, соприкасаясь друг с другом, взаимно скрещивались, следовательно и оставляли в наследство армянскому и славянским языкам много элементов своего языка. К таким языковым фактам надо отнести те явления и слова, которые, будучи неиндоевропейскими, остались вне поля зрения языковедов XIX века. Много таких слов и языковых фактов подметил Н. Марр; так, например: ар-

мянское слово *նորմի* „проклинать“ выводилось из пехлевского *piṣav*, которое, как признает проф. Ачарян не сохранилось.¹ Мы думаем, что это слово связывается с периодом матриархата, ибо слово состоит из частей *pi*/*per* и *zov*, из которых *pi*/*per*, как указывает Марр,² означает „жена-мать“, а слово *zov* мы связываем со словом *sue* (—so—we), гесп. *sve* „счастье“, которое палеонтологически означает также „небо“. В слове *նորմի*—*pi*—*per* означает „выше“. Подобное значение мы замечаем и в слове *նորմի* „нижний“, которое палеонтологически должно было означать, также „верхний“. Другая разновидность этого слова *նորմի* „евнух“ по своему смыслу связывается с эпохой матриархата; оно означает „женщина“ и своим содержанием относится к более ранней стадии; по словам Марра, оно означает „земля—мать“¹. Со словом *Ne-pi* связывается армянский термин *ну*, грузинский *пепа* „мать“, мегрельский *папа* „мать“, „невеста“, чанский *piṣa* „невеста.“ *նորմի* в армянском означает „проклятие“, „анафема“, как термин, связанный с эпохой матриархата раньше означал „звать“, „именовать“ (со стороны матери), „звать кого-либо сверху вниз“, а позже стал означать „проклинать“, „предать анафеме“. Из всех понятий этого слова, понятие „звать“ сохранил ряд славянских языков: в русском „зову звать“, в болгарском-сербском *zova*, славянском *zov*, „зов“ „звать“. Интересно то обстоятельство, что в литовском это слово означает и „колдовать“, что еще более подтверждает наше предположение. Мы думаем, что русские слова „завет“, „заветный“, „завещание“ также связываются с этим словом. Эти языковые факты как и общности обычаев, культов, музыкальных отображений и материальной культуры дают основание утверждать, что среди племен участвующих в формировании армянского и русского народов, существовали тесные связи, начиная с древнейших времен.

¹ А. Ачарян, Корневой словарь, том V, стр. 109.

² Н. Я. Марр, Избранные работы, том I, стр. 421.

¹ Н. Я. Марр, Избран. работы, том I, стр. 491.

Вышеупомянутые факты подтверждают мнение Марра о взаимосвязях кавказских и русских народов и о наличии и русском языке яфетического наслоения.

Таким образом среди племен, живущих на армянском плоскогории и в южных районах России, с древнейших времен создались культурные и экономические связи, которые, как пережиточные явления яфетической стадии, отразились на языках армян и русских. Исследование лексики армянского и русского языков показывает, что в обеих языках существуют языковые слои как яфетической так и индоевропейской стадий, которые в связи с изменением материальных условий жизни подвергались соответствующим изменениям, приняв своеобразную языковую структуру. Сохранившиеся в индоевропейских языках пережиточные элементы, как указал Н. Марр, не были охвачены в общем процессе перерождения языков из яфетической стадии в индоевропейскую, и как окаменелые языковые факты до сих пор бытуют в этих языках.



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0012632

[2034]

A $\frac{\text{II}}{13398}$

13398